Չորրորդ տարի № 2 14 Յուլիսի 1885

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՐԱԿՆԵ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատանը և կենտրոնական Գրավաճառանոցում: Յատուկ քաղաքացիք պիտի են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների քառին 2 կ.

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԲԱՑԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 1885 ԹՈՒԻՆ.

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներքին Գործոց պ. Նախարարի կարգադրութեամբ 1884 թուականի Նոյեմբերի 8-ին դադարեցրած «Արձագանքը» ներկայ համարով վերստին սկսվում է հրատարակուիլ նախկին ծրագրով և առաջուայ աշխատակիցների մասնակցութեամբ:

Բաժանորդագինն է 5 րուբլի.

«Արձագանքի» բաժանորդները ներկայ 1885 թուականի վերջին կստանան 20—30 տպագրական թերթից բաղկացած մի մեծահատոր գիրք գրական—գիտնական բովանդակութեամբ:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում խմբագրատանը և կենդրոնական գրավաճառ. Յատուկ քաղաքացիք դիմում են՝ *Тифлисъ. Редакція газеты „Арцаганкъ“.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջ և այժմ:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: „Բագուայ յայտարարութիւնները“: Գեներալ Ալխազեան: „Նամուս“ վէպը: Նալբէի վիպագրութիւնը: „Արձագանք“: Մի հանելուկ: Ճանապարհորդական յիշատակարան:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիայի արտաքին քաղաքականութեան արդի ճգնաժամը: ՖԵԼԻԵՏՕՆ: Օրիորդ Լիզա:—ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

(Հաշիւ Սանկտ-Պետերբուրգի Հայոց եկեղեցական տարեկան ժողովոյն վերաբերութեան 1884 տարի: Ս. Պետեր. 1885 թ.)

I

Այսպէս ուրեմն, ծխականների բազում տարիների մաքառումը յաղթութեամբ պսակուեցաւ: Այն հաշիւը, որի վերնագիրը առաջ բերեցինք, վկայում է, որ մայրաքաղաքների մեր եկեղեցեաց ահագին արժէք ունեցող կալուածքները նորից վերադարձած են ազգին:

Արդեօք ո՞ւմ կողմն էր պատմական իրաւունքը այս մաքառման մէջ. ահա մի խնդիր, որի վերայ նախ և առաջ կ'ցանկայինք դարձնել ընթերցողի ուշադրութիւնը: Ինչ առաւելութիւններ և ունենար եկեղեցական դոյքերի կառավարութիւնը հասարակութիւնից ընտրուած մարդկանց ձեռքով՝ համեմատելով անձնական և վերահասութիւնից զուրկ կառավարութեան հետ, մենք այնու ամենայնիւ սրբապղծութիւն կ'համարէինք ամենայն մի ձգտում ձեռնհասք լինելու այն պատմական իրաւունքներին, որոնք սրբագործուած են նախարեանների անունով, մի անուն, որ Հայոց ազգը յիշելու է միշտ և յաւիտեան երախտագիտութեան բուռն զգայմունքներով: Յայտնի է որ այս տոհմի այժմեան ներկայացուցիչ, մայ-

բաքաղաքների եկեղեցեաց կալուածքների նախկին հոգաբարձու, իշխան Աբամելիք-Լազարեանը, պաշտպանում էր իւր արտօնութիւնները հիմնուելով Լազարեանների կտակի վերայ, որոնք կառուցել էին եկեղեցիքը և եկեղեցապատկան շինութիւնները։ Այս կերպով ծխականների ձգտումը, եկեղեցական կալուածքների կառավարութիւնը իրանց միջից ընտրուած խորհրդի ձեռքով տալ տանել, հանդիսանում էր իբրև հերքումն մի իրաւունքի, որ բղխում էր կտակից, այսինքն մի այնպիսի արձանագրութիւնից, որ բոլոր ազգերի մէջ սրբազործուած իրաւունքների հեղինակութիւն է վայելում։

Ի պատիւ մայրաքաղաքներում ապրող մեր ազգակիցների պէտք է ասել, որ այսպիսի մի մեծ մեղադրանք բնաւ չէ հաստատւում անվիճելի պատմական յիշատակարաններով։ 1770-ին Կատարինէ II կայսրուհու պալատի ոսկերիչ Յովհաննէս Լազարեանը և այլ հայեր խնդիրք էին մատուցել, որ թոյլ տրուի իրանց Մոսկվայում և Պետերբուրգում եկեղեցիք շինել իրանց դաւանութեան համեմատ ժամասացութիւն և եկեղեցական ծէսեր կատարելու համար։ 1770-ի մայիսի 2-ին Կայսրուհին բարեհաճեց հրովարտակով բարձրագոյն շնորհել յիշեալ շինութիւնների կառուցանելու թոյլատրութիւնը և պատուիրեց, որ այս նպատակի համար ասիկոնութիւնը յարմարաւոր գետին տայ։ Ի կատարումն տոյն բարձրագոյն հրամանի Պետերբուրգում գեներալ-ոստիկանապետի ձեռքով տրուեցաւ մի գետին Նեվսկի պրոսպեկտի վերայ, մի գետին, որ վոհոցի կողմը ունէր 31 սաժէն և գաւթում 41 սաժէն։ Թէև ռուսաց օրինաց ժողովածոյի մէջ տեղեկութիւններ չենք գտնում Մոսկվայում գետին տալու մասին, բայց անկասկած է որ այնտեղ էս Կատարինէ II-ի կամքը կատարեալ կերպով իրագործուել է։ Այնուհետև սկսուեցաւ եկեղեցիների շինութիւնը ազգիս յօժարակամ նուէրներով և նուիրատուների շարքում պատուաւոր տեղ էր բռնում ոսկերիչ Յովհաննէս Լազարեանը։ Եկեղեցիների կառուցանելուց յետոյ մեայն դէյստվիտելնի ստացիկ սօվետնիկ Յովհաննէս Լազարեանը հոգևոր իշխանութեան հաճութեամբ շինեց Պետերբուրգում եկեղեցապատկան հողի վերայ երկու տուն այն պայմանով, որ երբ եկեղեցեաց եկամուտներից ծածկուին կատարուած ծախսերը, այդ տները եկեղեցւոյ լիակատար սեփականութիւն դառնան։

Սակայն արդէն 1800 թուին դ. ս. ս. Յովհաննէս Լազարեանը ամենայն Հայոց Կաթողիկոսին մի խնդիրք մատուցանելով յայտնեց թէ առ եկեղեցին ունեցած ե-ռանդն ու սէրը թելադրում է իրան նուիրել յօգուտ Պետերբուրգի եկեղեցեաց եկեղեցապատկան գետնի վերայ իւր ծախքով կառուցած տները։ Եկեղեցու այս ամենաարժանաւոր զաւակը խնդիրքի հետ միասին ներկայացրեց ի բարեհաճ հաստատութիւն Վեհափառ Կաթողիկոսի իւր կազմած հետևեալ կանոնները նուիրուած տների և նոցա եկամուտի կառավարութեան վերաբերութեամբ։

ա. Մինչև իմ և իմ ամուսնի կատարելիք Յովհաննէսեան մահը այս երկու տունը իւր բոլոր շինութիւններով, նոցա եկամուտը և հարկաւոր ծախսերը մեր կառավարութեան և աներութեան ներքոյ պիտի գտնուին, ապա ուրեմն և եկեղեցւոյ պաշտօնեաները մեզանից պիտի կանոնին ու նենան, համաձայն նոցա նկատմամբ եղած սրսշմանց։

բ) Մեր երկուսի մահուանից չետոյ այն տունը, որ երբ եկեղեցւոյ դուրս եմ գալիս գտնվում է ձախ կողմը իւր բոլոր շինութիւններով, բացի նեբքին զարդերի կամ կահ կարասիքի և մեւս տան տակ գտնուած խանութները, ինչպէս և Ս. Յարութեան եկեղեցւոյ գեաւլնը պէտք է յանձնուի եկեղեցական հոգաբարձութեան, որպէս զի նորա վերայ պատուաւոր անձինքներից երկուսը և չորսորդը ամենաառաջին հոգևորականներից տկիը, որոնք ղեկավարելով եկեղեցիների բոլոր եկամուտները և ծախսերը, եկամուտը պէտք է բաժանեն երեք մասը։ Մէկ մասը, ժամանակին նայելով, գործ դնել եկեղեցւոյ պաշտօնեաներին. ըստ արտքհանի իրանց կոչման վայել ռոճիկ տալու, եկեղեցուն կից մի փոքրիկ ուսումնարան պահել, վերանորոգել հին շինութիւնը և այլն։ Երկրորդ մասը ամենայն տարի տալ Լօնդոնում, բանկ կամ մի այլ ապահով տեղ, որպէս զի աճեցեալ գումարը կարողանայ գործ դնուել ժամանակ առ ժամանակ եկեղեցւոյ կամ շինութեանց նորոգութեան վերայ։ Իսկ երրորդ մասը կտակողը պատուիրում է աստուածահաճոյ նպատակներին ծառայեցնել։

գ) Այն տունը, որ եկեղեցուց դուրս գալիս գտնվում է աջ կողմը, մեր մահուանից չետոյ, պէտք է իբրև ընակարան տրուի մեր արական սեռի ժառանգներին մինչև երրորդ սերունդը, նոցանից անպատճառ չգտնուի եկեղեցւոյ տարեկան երկու հազար րուբլի.... իսկ երեք սերնդից չետոյ այն տունը ևս պէտք է հաւասարուի մնացեալների հետ և ելմտանի ի ծախսերի նորոգութեանը պէտք է գործածի հոգեշնորհներին, ինչպես վերևը նշանակած է։

Այս տողերից աւելի պարզ ոչինչ չէ կարող լինել։ Եթէ խօսքը եկեղեցական տների կառուցանող Յովհաննէս Լազարեանի կամքի մասին է, անկասկած է, որ դա ամենաորոշ կերպով եկեղեցական գոյքերի կառավարութիւնը սահմանում է ընտրողական սկզբունքի հիման վերայ, հոգաբարձուաց ժողովի ձեռքով։ Յովհաննէս Լազարեանի անմիջական յաջորդները, նորա ամուսինը և եղբայրները, հաւատարիմ մնալով իրանց տոհմի աւանդութիւններին, 1804-ին աչքի առաջ «ունենալով յաւագոյն կերպիւ հաստատելու և ապահովելու հայոց եկեղեցիների օգուտը ապագայում, ամենահպատակօրէն խնդրում են, որպէս զի իրանցից և իրանց ժառանգներից վերցնուին յօգուտ եկեղեցւոյ այն բոլոր իրաւունքները, որ տուած է նոցա Յովհաննէս Լազարեանը։ Ալէքսանդր I կայսրը, վերին աստիճանի մաքրապաշտ պատմական իրաւունքների խնդիրներում, բարեհաճեց հրամայել, որ այս իրաւունքներից միայն ինքեանք խնդրատուները կարող են հրաժարուիլ և երկու չետագայ սերունդների կամքին է թողնվում հետևել առաջին կամ վերջին կարգադրութեան։

1836-ի մարտի 11-ի պօլժէնիայում ոչինչ բացառութիւն չէ սահմանուած մայրաքաղաքների եկեղեցեաց գոյքերի կառավարութեան նկատմամբ։

Այս բոլոր փաստերը մեզ այն անվրէպ համոզմունքի են բերում, որ նախկին Հոգաբարձու իշխ. Աբամելիք-Լազարեանի իրաւունքը բացառապէս և անձամբ կառավարելու եկեղեցական գոյքերը պատմական հիմք չունէր, հակառակ էր Լազարեանների կամքին, և միանգամայն հակասում էր հայոց եկեղեցւոյ կանոնական իրաւունքով սահմանուած վարչական կարգ ու կանոնին։ Իշխ. Աբամելիք Լազարեանի իրաւունքի վերայ նոյն իսկ այս տեսակէտն ունէր և Նորին Վեհափառութիւն, այժմ ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ կաթողիկոսը։

(Վերջը միւս համարում։)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ ապագայ յունուարի 1-ից Բագուայ մէջ կ'սկսուի հրատարակուիլ մի հայերէն թերթ «Բագուայ յայտարարութիւններ» անունով։

*
* *

«Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» հաղորդում է, որ թագաւոր կայսրը բարեհաճել է Գրենադերների զօրաբաժնի հրամանատար ղեներալ—լեյտենանտ Աչխոչէանին նշանակել երրորդ բանակի հրամանատար։

***

«Թիֆլիսի Հայերէն գրքերի հրատարակութեան» Ընկերութիւնը ընդունելով մեր աշխատակից պ. Երիվանզադէի գրուած «Նամուս» անունով ընդարձակ վէպը ժողովրդական կեանքից առնուած՝ այս շաբաթ ձեռնամուխ եղաւ տպագրութեանը։

***

Պետական կալուածքների Նախարարութիւնը, ինչպէս հաղորդում է «Մօսկ. Վեդ» լրագիրը, մշակում է ներկայումս մի շարք կանոնների, որոնցով մի անգամից արգելվում է փայտաշէն նաւերի մէջ ածելով փոխադրել կերոսինը։ Այժմ եղած բոլոր այդ տեսակ նաւերը պէտք է ոչնչացուին երեք տարուայ ընթացքում։ Այն անձանց կարծիքով, որոնք քաջ ծանօթ են նաֆթի փոխադրելու գործին, փայտեայ նաւերի փոխարէն երկաթեայ նաւերի գործածութիւնը կ'արժանացնէ և կ'արագացնէ ապրանքի արտահանութիւնը, կ'պահպանէ մասամբ անտառները։ Բացի այս երը նաւթը փայտեայ նաւերով է տեղափոխվում մի որոշ տաքսի ծծվում է ջուրը և այսպիսով բացի ապրանքի կորուստը, վնասում է ձկնորսութեան։

***

„Արձագանք" առաջին տարուայ ամբողջ օրինակները բոլորովին սպառուած են. կան միայն առանձին համարներ։ Երկրորդ և երրորդ չորեքան տարեկան ամբողջ համարները սակաւաթիւ են և վաճառվում են իւրաքանչիւրը հինգ րուբլի։

***

Թիֆլիսում հրատարակուող մի հայ լրագիր («Մեղուն» չէ) առաջարկում է իւր ընթերցողներին հետեւեալ հանելուկը.

„Новости" (Նօվոստի) լրագիրն ասելով ներկայումս նեղքին գործերի մինիստրութեան մէջ հարց է բարձրացած կարդադրութիւն անելու մի քանի վճարունակների բանձման առթիւ, այսպէս տասն 1½ առևտրական հիմնարկութիւնները։

Ընթերցողների սրամտութեանն է թողնվում որոշել

ա) թէ այդ ինչ վճարունակներ են

բ) թէ ինչ կ'նշանակէ «1½ առևտրական հիմնարկութիւն»։ Ա.Հա թէ ինչպէս են մեր լրագիրները քաղուածքներ անում ռուս թերթերից։

ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ *)

48, Ղաչաղան՝ Ծաթերից 3 վ. գլուղ արք. *) ունի 30 տուն հայ բնակիչ և մի եկեղեցի հասարակ քարաշէն, փայտածածկ։ Գիւղիս արևմտակողմը Զորագետն ձախ ափին բարձրացող լեռան գագաթի վերայ կայ քարաշէն ամուր աշտարակաւոր մի բուրգ, ուր պատսպարուել են շատ անգամ շրջակայ բնակիչներն ասպատակութիւնների ներսից։

49, Զորագիւղ՝ Ղաչաղանից 7 վ. բնակիչներն են 26 տուն հայք. ունին մի անշուք և անպարզ հասարակ եկեղեցի. գիւղս հովում է Թեառգեառի քահանայն։

50, Դաեղ՝ Զորագիւղից 8 վ. բնակիչներն են 70 տուն հայք. ընկնում է ընդարձակ լեռնադաշտակի վերայ և ինչպէս ցոյց են տալիս հին շինութեանց հետքերն և եկեղեցիների մնացորդները, հնումն եղել է աւելի բազմամարդ և բարգաւաճ։ Այստեղ կան մինչև այսօր Մանկունեան տոհմի շառաւիղները։ Նոր ժամանակներում գիւղացիս մէկի տան մէջ գտնուած հին շինութեան մի դահլիճ տեսանք, յատակն աղիւսապատ. ամեն մի աղիւսի երկայնութիւնը 9 վերշոկ և լայնութիւնը 7 վեր. աղիւսների երեսը նուրբ նկարներով և ձմալով զարդարած՝ բերում են կատարեալ նմանութիւն այժմու եւրոպական ճաշակով զարդարուած պալեհետ յատակների. դահլճի մէջ տեղում գրուած է մի ծա-

*) Տես «Արձագանք» 1884 թ. №№ 41, 42 և 43.

*) Որովհետև այսուհետև յիշելի գիւղերն սակաւ բացառութեամբ արքունական կալուածներ են, վասնորոյ չենք յիշատակելու ամեն անգամ «գիւղ. արքունական»։

*կոակէն գոգաւոր քար, որ, ինչպէս երևում է, ծառայել է իբրև լուացարան։ Այժմու Ծեսական եկեղեցին քարաշէն է, որի սեղանն և խորաններըը նեբգաւառ և արտաբաւառ որձաքար քարով և կամարակապ։ Գիւղի Հարաւակողմն է մի այլ եկեղեցի Հանդստարանի մէջ, այժմ խախտուած. իսկ գիւղից դէպի արևելք երեք վերստ հեռաւորութեամբ խորափիտ ձորի մէջ է հրաշալի մենաստանն „Բարձրաբաշ սբ. Աստուածածնի“ որ բաղկանում է երեք վիտաւոր և հոյակապ եկեղեցիներից, որոնց կամարակապքն և պատերի վերին մասերն այժմ խոնարհած. գրուագները և նկարները սիւների և գրուագների վերայ չափազանց են նայողի ուշքն և միտքը *)։ Աբաննագրութիւնները մեծ մասամբ չառաջ բերուած են Ջալալեանցի Ճանապարհորդութեան առաջին մասում. այդ պատճառով մենք բերում ենք այստեղ մի երկուսը, մնացն նորանց տարբերութիւնը ցոյց տալու համար. 1) Հարաւային տաճարի արևմտեան դրան ձախ կողմի արձանագրութիւնը Ջալալեանցը դնում է „Ես յիշխանութեան տիեզերակալ Լշխանաց Լշխանի Աւագ և Ամբաբէդի Իվանէի. ես Պռաւշ որդի Վասակայ և Թոռն Խաղբակայ մնաքանեցայ սուրբ ուխտիս Բարձրաքաշիս և եռաւ ի յինութեան տանս Թէ դահլհան և սպասուորք սուրբ ուխտիս սահմանեցին պատարագ աւագ աւուրք արգ ով խափանէ զպրեալն կամ չառնէ զնմ ժամն, դատի յԱստուծոյ. և իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ“։ Իսկականն այս է „ՈՂՋ, ի Թուականութեան Հայոց և յիշխանութեան տիեզերակալ Լշխանաց Լշխանի Ջաքարէի. . . Իվանէի ես Պռաւշ որդի Վասակայ և Թոռն Խաղբակայ մնաքանեցայ սուրբ ուխտիս Բարձրաքաշիս և եռաւ ի յինութեան տանս ԴՃ. Եկեղեցիս և սպասուորք սուրբ սուրբ ուխտիս սահմանեցին ա. քառասուն աւր. . . ի տարւոջ արգ ով խափանէ զպրեալս կամ չառնէ զնմ ժամս դատի յԱստուծոյ և նմ մեղացն պարտական առաջի Աստուծոյ“։ 2) Նոյն տաճարի Հարաւային սեան արձանագիրը բերուած է այսպէս „կանդնեցաւ սիւնս և սուրբ նշանս ի Քրիստոս յիշատակ Յովհաննու միայնակեցի, որք երկրպագէք առացէք Աստուած ողորմի նմա ամէն“, իսկականն է, „Կանդնեցաւ սիւնս և սուրբ Նշանքս յիշատակ Յովհաննէս միայնակեցին, որք երկրպագէք առացէք Տէր Աստուած ողորմեա նմա ամէն“։ Տաճարի արևելեան կողմը հին վերևմտեաններն են միաբանից, որոնցից մէկի տապանաքարի վերայ գրուած է Էրէմեայ սուրբ Յերսնի Ջն. և միւսի վերայ Խաչատուր քահանայի ՈՂԴ։ Մէջլեն տաճարի արևելեան արտաքին պատի Ճակատին վորագրուած է երկդլխեան արծիւ, որ իւր մագիլներով մէջ բռնած ունի մի գառն։ Տաճարը շրջապատուած է եղել քարուկիւը պարսպով և միաբանական խցերով, այժմ կիսաւեր են։ Պարսպից դուրս դէպի հարաւակողմն է վանքի ձիթհանքն և քաղցրահամ ջրի աղբիւրը։ Բացի այս մենաստանից գիւղի շրջակայքում կան և երեք մատուռներ, որոնք ունին շատ ու քիչ ուխտաւորներ, իսկ բազմաթիւ խաչքարերի մէջ գիւղի հիւսիսակողմը Հանդստարանի մէջ տեղում կայ մի նրբաքանդակ մարդահասակ խաչքար, որ կոչւում է սիրուն խաչ, և ամենայն իրաւամբ կարող է կոչել այդ անունը, սորա վրայի արձանագրութիւնը մինչև հիմա պատճառում չկարողացանք օրինակել։*

51) Յուլիսի 10. Քարինջ՝ Դսեղից 6 վ. 28 տուն հայ բնակիչներով *) ունի մի փոքրիկ քարաշէն եկեղեցի։

52) Մարց՝ Քարինջից 4 վ կալուած Օձնայ վանքի, ունի 33 տուն բնակ. և մի եկեղեցի քարաշէն. հիանալի է սորա մայրի և կաղնի ծառերի անտառներ։

53) Լօռուտ՝ Մարցից 5 վ. բնակիչներն են 42 տուն և ունեն մի փոքրիկ եկեղեցի. կալուած նոյն վանքի։

54) Ախթան՝ Լօռուտից 4 վ. բնակիչներն են 22 տուն Հաղբատից եկած, ունին մի փոքրիկ հնաշէն եկեղեցի. կալուած նոյն վանքի։

55) Ահնիձոր՝ Ախթանից 5 վ. կալուած նոյն վանքի. բնակիչներն են 10 տուն. ունին մի եկեղեցի փոքրիկ և անշուք։ Իւրեանց տահմանումն է մի ուխտատեղի փոքրիկ մատուռ Հաւարակ, որ կոչուում է Ահնիձորավանք, որի անուշ նով կոչուել է և գիւղն. Ախթանի քահանայն հալուում է և այս գիւղում։

Վերադարձ Ճանապարհին Իգատակ կոչուած աւերակ գիւղի տահմանում, Բաբաջան գետակի ձախ կողմում, անտառապատ բլրի վերայ կան երկու գերեզմանոներ. մեկի կոթնանուած պատուանդանի վերայ կարդում ենք, „ի Թվիս ՈԿ. ես Առատակէս երեց կանդնեցի զխաչս և բարեխաւսուԹիւն լինէ և հաւր լմոյ պարոն Գուրգինի“. սորանից մի քանի վերստ անցած՝ Իգահատ գիւղի աւերակն է, որի եկեղեցւոյ դրան ճակատին գրուած է „ի Թուիս ՋԻ. ես Դանիէլ քահանայ որդի Ռըստակիսի շինեցի զեկեղեցիս և հալալ արդեանց իշխանուԹեամբ մեծ և բարեպաշտ իշխանին Գրիգորայ և եռաւ տէրունի տարին Բ պատարագ, արդ ազաչեմ զձեզ որք երկրպագէք ս. եկեղեցւոյս յիշեցջիք զիս և զամուսին իմ զՕնոպս և զեղբարս“։ Նոյն արձանագիրն Ջալալեանցը դնում է Մարց գիւղի եկեղեցւոյ սեմոց վերայ և չառաջ բերում ըստ այսմ „ես Դանիէլ քահանայ որդի Ռըստակիսի շինեցի զեկեղեցիս և հալալ արդեանց իշխանուԹեամբ մեծ և բարեպաշտ իշխանին Գրիգորայ և Թուին ՋԴ. և այլն *)։

56) Յուլիսի 12. Սաղիբագի՝ Դսեղից 3 վ. ունի 18 տուն բնակիչ, որոնք եկած են Ծարեկը գիւղից, և մի գեղեցիկ եկեղեցի քարաշէն։

57) Խաչի գիւղ՝ առաջինից 3 վ. բնակիչներն են 34 տուն. ունին մի վայելուչ քարաշէն եկեղեցի։

58) Ղամշիուտ՝ առաջինից 2 վ. բնակիչներն են 19 տուն. ունին մի եկեղեցի նորակերտ, քարաշէն։

59) Շահալի՝ Ղամշիուտից 2 վ. բնակիչներն են 51 տուն. ունին մի եկեղեցի քարաշէն և վայելուչ։

60) Յուլիսի 13. Քօլագիրան՝ Շահալիից 5 վ. բնակիչներն են 15 տուն. ունին մի եկեղեցի քարաշէն, վայտաձածկ. հովուում է Կուրգանի քահանայն։ Շահալիի և Կուրգանի մէջտեղում Ճանապարհից դուրս է մի աւերակ գիւղատեղի, որ կոչուում է Յանի. և աւանդութիւնն ասում է, Թէ այդ տեղի բնակիչները գաղթած են եղել Անի քաղաքից։

61. Կուրգան՝ Քօլագիրանից 5 վ. գիւղ դաշտադիրք, ունի 70 տուն բնակիչ և մի եկեղեցի կոփածոյ քարով, Թաղակապ։

62) Վարդաբլուր՝ Կուրգանից 3 վ. բնակիչներն են 71 տուն. ունին եկեղեցի հոյաշէն, չորս Թաղակապ մեռելի վերայ. Կուրգանի և Վարդաբլուրի մէջտեղում Ճանապարհից վոտք ինչ հեռու է կոզից անունով յատնաքնակ գիւղն, որի

---

*) Հարաւային եկեղեցին կոչւում է ս. Գրիգոր։

*) Այսուհետև յիշատակելիք գիւղերի բնակիչները գուտ հայեր լինելով չենք կրկնում ամեն անգամ բնակիչ բառի հետ և հայ անունը. կյիշատակենք միայն երբ հայերի հետ խառն լինեն և օտարներ։

*) Ճանապ. մասն ա. էջ. 108։

վտակը կոչուում է Տօտիկջուր. և առաւում է, որ այդ եղել է Տուտէ եշխանի, Աղբատի հաշտարար Գրիգոր արքեպիսկոպոսի հօր, կալուածը:

63) Հոբարձի՝ Սալեքագիւղից մի վ. ունի 29 տուն բնակիչ և մի վաքրկի եկեղեցի քարաշէն, փայտածածկ:

64) Գիւլտաբակ՝ Հոբարձիից 1 վ. ունի 70 տուն բնակիչ և մի եկեղեցի Հոյակապ և վաքրէչաշէն, պատառքատ սրբատաշ քարով և ներքուստ ապիտակ սուսպաձ. տանիքը թաղակապ և չորս սիւների վերայ: Վարդաբլուր, Հոբարձի, Գիւլտաբակ և Գետադեառ գիւղերը շինուած են ընդարձակ հովտի մէջ: Սոցա, ինչպէս և Կարդանի բնակիչները, գաղթել են Փամբակի գաւառից 1818 թուին, նոյն ժամանակի խռովութիւնների և պատերազմի հետևից: Գիւղաքաղաքակի հարաւակողմը զարձրանում է բլուրակ կամ Դվալ լեառն, որ բաժանում է Լօռից Փամբակից: Այս լեառնից դուրս է գալիս ընտիր ջրաղացաքար, որ առաւում է մինչև Վարս և ուրիշ տեղեր: Գիւղաքաղաքակի դիմացը նոյն լերան մի ճիւղի ստորոտում է աւերակ գիւղատեղի, ուսկի մի անցք տանում է դէպի բլուրակ և կոչում է Որմակաց գուռ, որից ծագում է խնդիր, թէ մըզեօք այդ լերան հին հայկական անունը չէ՞ եղել Որմակ:

65) Յուլիսի 14. Գետադեառ՝ առաջինից 1 վ. բնակիչներն են 85 տուն և ունին մի հոյակապ քարաշէն եկեղեցի: Արդէն Գիւլտաբակ և Գետադեառ գիւղերում երևում են հանոնաւոր տներ, վսեմանակ տէն գետնափոր բնակարանների, որոնք սովորական էր մեզ տեսնել նախընթաց գիւղերում, և յայտնի բան է Ջալալ-Օղլիի և մնաց մի երկու շրջակայ ռուսաբնակ գիւղերի ազդեցութեան շնորհիւ: Գետադեառից դէպի Ջալալ-Օղլի տանող Ճանապարհի վերայ է ռուսաբնակ Նիկոլայեվկայ գիւղը, կանոնաւոր փոդոցներով և տներով, շինուած Ամթակից կոչուած հին աւանի տեղում, ուր եղել է երկու եկեղեցի, որոնք, ինչպէս շինուածների աւերակների շատերը, քանդել են ռուսները և քարերը տարել: Ամթակից կոչուել է այս աւանը Լօռի քերդին տահմանակից լինելու պատճառով: Այդ քերդի մասին կը խօսենք ներքևը:

66) Ջալալ-Օղլի՝ Գետադեառից 7 վ. աւան լայնատիր. ընդարձակ հովտի մէջ: Բնակիչներն են 123 տուն հայք և մի քանի տուն ծառայութիւն աւարտած ռուսներ. օդն և ջրի առողջարար լինելու պատճառաւ վաղուց բնակում է այստեղ և ռուս զօրագնդի մի մասն: Գիւղի առաջով անցնում է Դեպէտ գետն, որ սկիզբն է առնում Ղարախաչ լեռներից. և Դսեղի մօտ ընդունելով իւր մէջ իւր նշանաւոր ճիւղերից մէկը—Փամբակի ջուրն, անցնում է Հաղբատի ձորերով, ուսկի և Ձորագետ անունն է ստացել. Ջալալ-Օղլու մօտ տալիս է համեղ կարմրախայտ: Այստեղի հայերը պարապում են վաճառականութիւնով և երկրագործութիւնով, ունին երկու եկեղեցի. մինը հասարակ քարաշէն, փայտածածկ, միւսը սրբատաշ քարով, կամարակապ, որ օծուեց այս տարի: Գիւղի ուսումնարանը, որ 1879 թուից մինչև 1883-ը շարունակում էր գեղեցիկ յառաջադիմութեամբ, ներկայումս առ ժամանակ ընկած է, ժողովրդականներից ոմանց և հոգաբարձուների մէջ տիրող երկպառակութիւնների շնորհիւ:

Ամսոյս 15-ը Վարդավառի օրը լինելով՝ նշանաւոր ուխտի օր էր այս կողմի հեռաւոր և մերձաւոր գիւղերի համար սուրբ Սարգիս ուխտատեղն, որ գտնուում է Ջալալ-Օղլուց տասը վերստ հեռու, Վարդաբլուր գիւղի մօտ, բարձրացած լեռան վերայ: Դորա արդիւնքը Ներսիսեան դպրոցին լինելու համար ս. Առաջնորդը ցանկացաւ նկատել ուխտաւորների բազմութիւնն և իմանալ արդեանց որքանութիւնն, ուստի և առիթ ունեցանք տեսնել այդ ուխտատեղն, որ բաղկանում է մի վաքրկի մատուռից և նորան կից մի փայտածածկ գաւիթից: Մատուռի արևմտակողմը կառուցուած է մի այլ սրբատաշ ընդարձակ եկեղեցի, այժմ առանց տանիքի, շինուած Կորիկէ Թագաւորից, ինչպէս ցոյց է տալիս հետևեալ արձանագրութիւնը որ գտնուում է հարաւային արտաքին պատի վերայ. «ի ՆՂԹ. Թվականութեանս հայոց ես Կորիկէ Թագաւորս շինեցի զայս ուխտատեղիս իմ մեղայ Թողութեան և արեշատութեան իմոց ինդ (ընդ) ձեռամբ Աշոտայ Արծրունի *) . . : Ուխտաւորների խուռն բազմութեան մէջ աչքի էին ընկնում նաև բազմաթիւ չոյն և Թուրք ուխտաւորները լրանց ընտանիքներով, որոնք ոչ պակաս ջերմեռանդութեամբ մորթում էին լրանց մատաղները:

67) Յուլիսի 18. Բերդ՝ այսպէս կոչուում է Լօռու նշանաւոր բերդաքաղաքն, որտեղ այժմ բնակուում են 20 տան չափ հայերը (Ջալալ-օղլուց հեռու է չորս վերստ) և որ երկու կողմից պատած է ձորով, իսկ արևմտեան և հիւսիսային կողմերից ունեցել է խրամ և արտաքին պարիսպ, բուն ներքին պարիսպն է քարուկիր ամուր շինութիւն. լայնութիւնն, ինչպէս տեսանք, 30 կանգուն է. պարիսպը մինչև այսօր մեծ մասամբ կանգուն մնացած է, իսկ բոլոր ներսի շինուածները ներկայացնում են կիսակործան աւերակներ, բացի անվնաս մնացած երկուսից. մինը՝ Թաղակապ ընդարձակ շինութիւն, գմբէթաձև տանիքով, երկու սիւներով վերայ հաստատուած, որ պէտք է եղած լինի անշուշտ պահեստն, այժմ ժողովուրդը փոխել է եկեղեցւոյ, միւսը մի վաքրկի սրբատաշ քարով և Թաղակապ շինուած է և ունի ներքուստ պատուհանաձև խորշեր, երեքն հիւսիսակողմն և երեքը հարաւակողմն. այս շէնքը մեզ ուղեկցողներից ոմանք անուանում էին աղջկանց կրթարան: Հարաւակողմը կան բազանիքի և այլ շինուածների աւերակներ: Հիւսիսային ձորի մէջ գտնուում է մի սառնորակ ականակիտ աղբիւր, որ կոչուում է լոյս-աղբիւր: Բերդի դիմացը, քառորդ վերստ հեռու դէպի հիւսիս-արևմուտք է ընդարձակ հին գերեզմանատուն, որի քարերը գեղագիր շարունակ տանուում ծախում են Ջալալ-օղլի:

68) Ագարակ՝ բերդից 2 վ. ունի 50 տուն բնակիչ և մի եկեղեցի անշուք, կարօտ վերանորոգութեան. եկեղեցւոյս հարաւակողմը, մի քանի քայլ հեռու, է աւերակ մի այլ եկեղեցւոյ, սրբատաշ քարաշէն:

69) Լէջան՝ Ագարակից 1 վ. բնակիչներն են 54 տուն, ունին մի եկեղեցի հնաշէն և կարօտ վերանորոգութեան:

70) Յովհաննաձոր՝ (օվանդարայ) Ագարակից 6 վ. ունի 17 տուն բնակիչ և մի եկեղեցի քարաշէն:

71) Յուլիսի 19, Ուռուտ՝ Լէջանից 4 վ. ունի 30 տուն բնակիչ, որոնցից մի քանիսը սկսել են Կարինից գաղթող և այստեղ բնակուել. հաստատուղ երկու տանից, և զոքա դեռ պահպանել են մասամբ Կարնոյ գաղթականների հնչմունքն և բարբառի հետքերը: Գիւղն ունի մի եկեղեցի քարաշէն անշուք, կարօտ վերանորոգութեան. նորա կողքին մինչև այսօր մնում է սրբատաշ Թաղակապ հին եկեղեցւոյ աւերակն, որն, ինչպէս ասում են, քանդել են Ջալալ-օղլու

*) Հանգուցեալ Յովհաննէս աւագ քահանայ Վարդշապատցի արձանագրիս վերջին տողն կարդացել է ...« խմբինդ՝ ձեռամբ Աշոտ Մարզպանի» (առս Համ. վարք նորա, Տփղիս. 1853 եր. 40,) բայց հակառակն այն է, ինչպէս մենք ենք օրինակել:

ռուսները շինուԹեանց դրած դնելու համար։ Ինչպս առել է իւր անունն ուրիներին բազմուԹիւնից, որոնք, սակայն, այժմ կտրատուած են։

72) *Հայգարբեգ՝ Ուռուսից 2 վ. բնակիչներն են 35 տուն հայք և մի տուն Թուրք։ Հայք ունին մի եկեղեցի քարաշէն, Թաղակապ, որի տանիքը նորոգում էր ժողովուրդը։*

Այստեղ վերջանում է Լօռուայ գործակալուԹիւնը, մեր անցած բոլոր գիւղերի բնակիչներն—սկսած Ձօճկանից—ներկայացնում են զարմանալի նմանուԹիւն Երևանի ժողովրդին, Թէ իրանց լաւած մաքուր Երևանեան բարբառով—տակաւին պահպանուԹեամբ վերջին ժամանակի գաղԹականիներից, որոնք չիշուած են իւր տեղում.—Թէ կանանց և Թէ տղամարդկանց հագուստի տարազով, և Թէ մի քանի կերակրների կողմից, և այս ցոյց է տալիս, որ Գուգարաց այս ամենից ամուր և ապահով մասը վաղուց արդէն պատսպարան է եղել պատերազմների և խռովուԹիւնների երեսից Երևանից այս կողմը գաղԹող ժողովրդին։

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԾԳՆԱՃԱՄԸ

Եւրոպական տէրուԹեանց արտաքին քաղաքականուԹիւնն այն աստիճան գրաւել է ներկայ 1885 Թուում ազգերի ուշադրուԹիւնն և ոյժերը, որ կարծես Թէ սոցա պետական և ազգային շահերն ամբողջովին Թեքուելու են դէպի միջազգային խնդիրների կողմը։ Մի քանի տարի շարունակ ծագած և իրարու վերայ բարդուած խնդիրները վերջին ժամանակներս սուր բնաւորուԹիւն ստանալով՝ անյապաղ պահանջում են իրանց լուծումը, որ իւրաքանչիւր երկրի կառավարուԹեան համար մեծ հոգսեր է պատրաստում մօտաւոր ապագայում։ Այս պատճառաւ սոցանից ամէն մէկը ստիպուած է լարել իւր ունեցած բոլոր ոյժերը, ոլպէս զի միջազգային ներդաշնակուԹեան մէջ չը կորցնէ իւր պատշաճ դիրքը, կամ ապագայի նկատմամբ՝ ապահովէ իւր տեղը միւս հզօր տէրուԹիւնների հանդէպ։

Այս ձգտումներին պէտք է վերագրել վերջին կէս տարուայ ընԹացքում Ֆրանսիայի և Անգլիայի կառավարուԹեանց մէջ տեղի ունեցած փոփոխուԹիւնները և արդի միջազգային յարաբերուԹեանց շփոթ և խառն դրուԹիւնը։ Ոչ ոք չը գիտէ Թէ որտեղ պէտք է որոնել այս անելանելի դժուարուԹեանց բանալին, կամ ո՞ւր պիտի հասցնէ ազգերին վերջապէս Եւրոպայի արդի աւերիչ արտաքին քաղաքականուԹիւնը։ Այստեղից ու այնտեղից ձայներ են լսւում Թէ քաղաքակիրթ և լուսաւորեալ ազգերը շուտով հանդիսատես կը լինին ընդհանուր եւրոպական արիւնհեղուԹեան, եԹէ իշխան Բիսմարկը մի հնարաւոր ելք ցոյց չը տայ իւր ընկերակից նախարարներին և ազգերի վիճակը որոշողներին այսպիսի ահաւելի պատուհասից....

Զարմանալի մի տեսարան է ներկայացնում արդի միջազգային «ներդաշնակուԹիւնը», որ իւր մէջ միմեանց հաւասարակշռող ոյժեր չունենալու շնորհիւ այլայլուել է իսկապէս միջազգային «գերիշխանուԹեան», Թողնելով այս վերջինի ղեկը իշխան Բիսմարկի ձեռքում՝ մանաւանդ որ Ռուսիան օգուտ քաղելով այժմեան միջազգային հանգամանքներից՝ իւր արտաքին քաղաքականուԹիւնն ամենայն յաջողուԹեամբ տեղափոխել է կենտրոնական Ասիայ։ Արևմտեան ազգերից՝ Ֆրանսիայի արտաքին քաղաքականուԹիւնը վերջին երկու տարիներում հազիւ սկսել էր հզօրանալ, երբ յանկարծ մի նշանաւոր հարուած կրելով Չինաստանում, կորցրեց իւր պրէստիժը։ Աւստրիան վաղուց արդէն Թողել է ներդաշնակուԹեան մէջ ներգործական դեր խաղալն և լուիկ մնչիկ ընդունում է Գերմանիայի գերիշխանուԹիւնը։ Անգլիան՝ որ Գերմանիայի կողքին հաւասար միջազգային հզօրուԹիւն էր վայելում, այսօր Գլադստընի երերուն և աննպատակ քաղաքականուԹեան շնորհիւ այն դրուԹեանն է հասել, որ մի որոշ և վճռորոշական քայլ անելու համար ստիպուած է Գերմանիայի համաձայնուԹեանը դիմելու։ Հեռատքրքրելի և խրատական է իւր հետևանքներով մանաւանդ Անգլիայի արտաքին քաղաքականուԹիւնը, որ վերջին հինգ տարուայ ընԹացքում երկրի ազատամիտ կուսակցուԹեան ձեռքումն էր և որ սորանից մի ամիս առաջ անցաւ նորից պահպանողականների ձեռքը։

1880 Թուի պարլամենտական ընտրուԹեանց ժամանակ ազատամիտ կուսակցուԹիւնը յաղԹեց պահպանողականին, և կառավարուԹեան ղեկը լօրդ Բիկօնսվիլդից անցաւ Գլադստընին։ Այս յաղԹուԹիւնը նորանով էին բացատրում, որ անգլիական ազգը յոգնել էր պահպանողականների զինուորեալ քաղաքականուԹիւնից և ցանկանում էր վերջ դնել Բիկօնսֆիլդի Ասիայում, Սուդբիկէյում և Միջերկրական ծովի վերայ սկսած անթիւ միջազգային վտանգաւոր ձեռնարկուԹիւններին։ Գլադստընի յաղԹուԹիւնը ոչ միայն Անգլիայում էին ոգջունում, այլ և ամբողջ Եւրոպայում՝ խաղաղուԹեան և ազատուԹեան բարեկամները, որ պետական խոշոր վերանորոգումների հետ մէկտեղ սպասում էին նաև արտաքին քաղաքականուԹեան սկզբունքների նկատմամբ հիմնովին փոփոխուԹիւն դէպի լաւը և իրաւացին։

Եւ յիրաւի սկզբում Գլադստընն ընդդիմադործում էր իւր նախորդի զինուորեալ քաղաքականուԹեանը, քանի որ դեռ երկիւղ չէր կրում հակառակորդներից, իսկ այն րոպէից երբ սկսեց կասկածել՝ Թէ մի գուցէ իւր հեղինակուԹիւնը ընդդիմադիր կուսակցուԹեան շօշափելի հարուածներին չը կարողանայ դիմանալ և իշ-

խանութիւնն անցնի հակառակորդների ձեռքը, սկսեց հեռվհետէ զիջումներ անել հասարակական տարբեր հոսանքներին։ Այսպիսի պայմաններում ի հարկէ դժուար էր գործելը, և Գլադստընը ստիպուած էր կամ յանձնել կառավարութեան ղեկը ընդդիմադիր կուսակցութեան, կամ անցնել այնպիսի մի արտաքին քաղաքականութեան որ բազմատեսակ և միմեանց հակասող հոսանքները հաշտեցնելու ճգնէր։ Ազատամիտ կուսակցութեան գլուխն այս վերջին որոշումն ընդունեց, ուստի և ամենամեծ դժուարութեանց մէջ ընկնելով՝ ի վերջոյ իւր պաշտօնէութեան անկման պատճառ դառաւ, և այս այնպիսի հանգամանքներում, որ այսօր նորա պաշտօնակիցներն աւելի նախատինք են կրում ժողովրդի կողմից, քան թէ Բիկօնսֆիլդը իւր անկման րօպէում։

Այն արիւնհեղութեան հակառակորդներն և սկզբունքով խաղաղութիւն և արդարութիւն քարոզողները, որ քանի տարի առաջ անգլիական պարլամէնտում քարկոծում էին Բիկօնսֆիլդի արտաքին քաղաքականութիւնը, այսօր նոյն պարլամէնտում իրանք հանդիսանում են իբրև ծանր պատերազմների և վտանգաւոր ձեռնարկութեանց պատճառներ։ Բիկօնսֆիլդն իւր բոլոր այժերը նուիրել էր արտաքին քաղաքականութեան և իր հմուտ քաղաքագիտութեան շնորհիւ հզօր դիրք էր վայելում Եւրոպայի ներդաշնակութեան մէջ, այնինչ Գլադստընն իւր ազատասէր խոստումներն արտաքին քաղաքականութեան նկատմամբ չիրագործելուց ջոկ, այսօր Անգլիայի միջազգային յարաբերութիւնները թողնում է այնպիսի խառնաշփոթ և վտանգաւոր դրութեան մէջ, որ Բիկօնսֆիլդի յաջորդը հազիւ թէ կարողանայ մի յարմարաւոր ելք գտնել նորանից։

Սկսեալ Ալէքսանդրիայի ռմբակոծելուց մինչև վերջին դէպքը Աֆղանստանի սահմանագլխում՝ մի շարք այնպիսի սխալներ է գործել Գլադստընը, որ Անգլիայի հասարակական կարծիքը չը զլացաւ վերջերումս իւր դատավճիռը կարդալու այս մեծ անձնաւորութեան դէմ, որ իբրև պետական գործիչ՝ ընդհանուր եւրոպական հռչակ է վայելում։ Կարծես թէ հինաւուրց դիտողութիւնը ճշմարտանում է նորից, որ ազատամիտ պետական գործիչներին հազիւ՝ յաջողւում միջազգային խնդիրների նկատմամբ հաւասարակշռութիւն պաշտպանելը։ Այսպէս՝ երբ Սրաբի փաշան ձգտելով Եգիպտոսի վերածնութեան նպատակին ճգնում էր իւր հայրենիքի անկախութիւնն և ազատութիւնը հաստատելու, Գլադստընը հարկաւոր համարեց ուղարկել նորա դէմ Վօլզլէյ զօրավարին, որ ծովապետ Սէյմուրի հետ մէկտեղ զսպեն հայրենասէր փաշայի ապստամբութիւնը, իսկ երբ երկրի խաղաղութիւնը վերականգնեց անգլիական ղէնքի ոյժով, այնուհետև ինքը Գլադստընը ոչ մի որոշ քայլ չարաւ երկրի բարօրութեան համար։ Սորանից մէկ տարի յետոյ, երբ Սուդանի նահանգը իրօք բաժանուել էր Եգիպտոսից, շնորհիւ այն կրօնական և քաղաքական շարժման, որի գլուխն է անցել Մուհէմմէդ-Ահմէդ մահմետական մարգարէն, Գլադստընն սկզբում կարծես թէ ընդունեց Սուդանի անկախութիւնն, իսկ յետոյ ուղարկեց այնտեղ Գօրդօն անզօրք զօրավարին, որ երկրի խաղաղութիւնը պէտք է վերականգնէր փողի զօրութեամբ և բնիկ ժողովրդի աչքում իւր հինաւուրց վայելած հեղինակութեամբ։ Այս առասպելական հերոսը տասնեամեակ ամիս պաշարուած Խարթումում դիմանալուց յետոյ, իւր հերոսութեան և ասպետական հոգու զոհ դառաւ, մինչդեռ անգլիական բանակը դեռ հազիւ մօտենում էր Խարթումին....

Խարթումի անկման և Գօրդօն փաշայի կորստեան լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ Անգլիայում և դառնագին հարուածեց Գլադստընի նախարարութիւնը, որ իւր տատամսոտ և երերուն գործունէութեամբ կատաղութեան էր հասցրել ժողովրդին։ Անգլիական ամբողջ մամուլը բացականչում էր, թէ այսպիսի մի ազգային աղէտքն և անարգանքը դեռ չը տեսնուած բան է ներկայ սերնդի համար, որ դատապարտում է իւր կառավարութիւնը։ Պարլամէնտում պաշտօնապէս քուէարկվում էր նախարարութեանը կշտամբելու հարցը և միմիայն 14 ձայնի առաւելութեամբ ժողովը մերժեց այս առաջարկութիւնը (302 ձայնով 288-ի դէմ)։ Այն ինչ Գլադստընը իւր պաշտօնակիցների հետ երկար խորհելուց յետոյ, որոշեց մնալ իր պաշտօնում, մինչև որ վերջին ժամանակներում վերայ հասաւ Աֆղանեան սահմանագլխի խնդիրը և վճռեց Անգլիայի ազատամիտ նախարարութեան վիճակը, ստիպելով նորան յանձնել կառավարութեան ղեկը հակառակ կուսակցութեան։

Յ. Տ.

ՖԷԼԻԷՏՕՆ

ՕՐԻՈՐԴ ԼԻԶԱ

ՆՈՒԷՐ Ն . . . ԻՆ

(Շարունակութիւն և վերջ)

Ալբաս Պետրովիչը մի փոքր լռեց, գասկէջից մի քէչ խմեց և մի ծխախոտ վառելով, շարունակեց.

—Իրեկնագէմ էր։ Մարտին Բուդանիչը տանը չէր բայց ադաղաբար, Եւգենիան մուտափում էր։ Լեզան պառաշգամբի վերայ նստած, նայում էր քաղաքի չջնակայ տաներին։ Ինձ տեսաւ թէ չէ, նկատեց նա վեր թռաւ տեղից և ձեռը մեկնեց։ Ես նորա դէմքի վերայ նկատեցի անապատելի ուրախութեան մի

արտայայտութիւնն, որը նա իզուր աշխատում էր թագցնել: Մի քանի վայրկեան մենք չկարողացանք լսել: Նա սեղմեց նորա ձեռը և նստեցրեց գետնի ու պէտ:

„—Ո՞րտեղ էք մնացել,—հարցրեց վերջապէս Լիզան:

„—Մահուիկ զբաղուած էի գործերով,—ասաց նորան:

„—Իսկ մենք կարծում էինք, որ հիւանդացել էք:

„—Մի՛թէ:

„—Բանի անգամ ծառային ուղարկել էնք, բայց ձեր բնակարանը չի գտել:

„—Շնորհակալ եմ ձեր հոգածողութեան մասին:

„—Հայրս է ձեր մասին շատ հարցնում,—շտապեց աւելացնել Լիզան:

„—Շնորհակալ եմ, ինչպէս է Մարտին Բուղդանիչը:

„—Լաւ է: Երբէք այդումը երկու ժամու չափ եւ և ժեղեան պտրեցինք ձեզ, բայց ոչ մի տեղ չ'տեսանք:

Ես այս անգամ չ'կարողացայ, թէ ինչպէս յայտնեմ իմ շնորհակալութիւնը: Մի քանի անգամ „շնորհակալ եմ“ բառը իրարու հետևից կրկնելը ինձ անհամ էր թւում:

„—Դուք ինչպէս էք,—վերջապէս հարցրի ես, չանկարծ մտաբերելով իմ սխալը:

„—Շատ տխուր, մի շաբաթ է չդիտեմ ինչ է պատահել ինձ, գլուխները չեմ կարողանում քնել:

Այդ ասելով, Լիզան գլուխը թեքեց կրծքին և մտերմով սկսեց ուղղել հանդիսքի վերևերը: Ես նայեցի վերևից ցած նորա երեսին և նկատեցի ոչ թէ անքնութիւնից, այլ մի ինչ որ ծանր մտածողութիւնից առաջացած վիմփոխութիւն: Ոչ նորա աչքերի կոպերն էին ուռած և ոչ էլ նորա սպիտակոցն էր գեղնած: Անքնութեան այդ հետևանքները չ'կային Լիզայի դէմքի վերայ, կար միայն մի թեթև գեղնութիւն: „Հը՛մ, իմ բացակայութիւնը իզուր չի անցել“—մտածեցի ես ուրախանալով:

„—Դուցէ հիւանդ էք, թոյլ տուէք տեսնել ձեր երակը,—ասացի ես:

Լիզան զգաշութեամբ մեկնեց ինձ իւր բազուկը: Ես անյապաղ ոչ թէ բռնեցի, այլ խելագարի պէս ճանկեցի այդ բազուկը: Մի վայրկեանում նա գողաց իմ ձեռի ափում և Լիզան գուրս խլեց նորան արագութեամբ:

„—Թողէք, ես առողջ եմ,—ասաց նա, կարմրելով և երեսը ինձանից շուռ տալով:

Ես զգացի մի ինչ որ ցնցում, անգղջ մարմնովս անցաւ մի ահռելի դողդոջ և կամենում էի բերանս բացել չ'գիտեմ ինչ ասելու: Բայց այդ վայրկեանին ներս մտաւ Մարտին Բուղդանիչը: Լիզան շփոթվեց և վեր կացաւ տեղից:

„—Օ՜օ, Արդաս Պետրովիչ, Արդաս Պետրովիչ,—գիմեց ինձ Մարտին Բուղդանիչը, չ'գիտեմ ինչու, այս անգամ առանձին սովորականից աւելի կոշտ արտասանելով: Նա մօտեցաւ և ձեռս սեղմեց:

«—Բարով բարով, քանի ամառ է, քանի ձմեռ է, որ մեզ մոռացել էք,—շարունակեց նա, անվնաս քերելով իւր կոկորդը СКОЛЬКО բառը ասելիս, որ չորս անգամ գուրս քերի Ե տառը:

Մենք գնացինք ներս: Ներկայացաւ և գուդված, զարդարված և գենիան անվոխիս հեդնական ժպիտը իւր լսամանկ երեսում: Մենք սկսեցինք խօսել Մարտին Բուղդանիչի սիրեցեալ քաղաքական հարցերի մասին: Բայց զարմանալի բան, որքան որ աշխատում էի, այս անգամ ծերունին քանը չէր երկարացնում: Իսկ Եւգենիան երեսիս անգամ չէր նայում: Լիզան աչքերի տակով մտիկ էր անում ինձ և ժըպտում, իսկ երբեմն ծանծաղ ծիծաղում: Երբ նա ֆլտում էր, ես ես ժպտում էի, բայց երբ ծիծաղում էր, չէի համարձակվում ծիծաղել: Նա մերթ ընդ մերթ նայում էր իւր քրոջ և հօր երեսին և յետոյ ինձ վերայ ձգում թախանձող հայեացքներ: Պարզ էր, որ նա կամենում էր խնամանալ, թէ ինչ տպաւորութիւն է անում ինձ վերայ հօր և քրոջ այնօրուայ ստանդարտիկը և մի և նոյն ժամանակ, կարծես թէ, նոյա վոխադրկեն ամաչում էր ինքը: Տեսնելով, որ բանս մի քիչ լաւ չէ, ես շտապեցի դուրս գնալ: Բայց ես դուրս եկայ թեթևացած: Լիզայի սէրը այս անգամ ինձ համար անհատկածելի էր: Փա՛ռք, ինչ շուտ է չորանում կրկորդս:

Արդաս Պետրովիչը կրկին գաբեջրից մի վոքր կամ արաւ:

—Այդպէս Գէորգ, շարունակից նա, բերանը սրբելով,—ինձ համար մատանը պարզվեց Լիզան: Մնում էր միայն մի բան, դա էլ շուտով կատարվեց: Միւս օրը երեկոյեան ես գնացի կլուբ: Ընտանեկան երեկոյ էր: Ես 'ի զուր չէի սիրտս պարել, այդ պատճառով մի կողմ քաշված, ականջ էին դնում երաժշտութեան: Յանկարծ աչ ուսիս վերայ զգայի մի թեթև հարուած: Յետ նայեցի և տեսնեմ Լիզան հովհարը ձեռին կանգնած:

—Հայրս ընթերցասրանում կարդում է, ժենիան էլ պատրաստ է. ես միայնակ եմ,—ասաց նա:

—Յայտնի բան է ես նոկոյն ուրախութեամբ ընկերացայ Լիզային: Երաժշտութիւնը նուագում էր: Լիզայի առաջարկութեամբ մենք գնացինք այգի զբօսնելու: Այստեղ աչ ոք չ'կար, ամենքը բռանդայում ժողովուած, մտիկ էին անում պարողներին: Խաղաղ և զով երեկոյ էր: Մի քանի շրջաններ անելուց յետոյ, չ'գիտեմ ինչպէս, ես չանկարծ ինձ Լիզայի հետ տեսայ մի մութ ծառուղիում, ուր ոչ ոք չէր երևում: Մենք նստեցինք կանանչ նստարանների մեկի վերայ, երբոր քով: Նա լուռ էր, ես էլ լուռ էի: Նա ասում էր թէ երաժշտութիւն է լսում, ես հաւատացնում էի թէ չափազանց եմ գեղեցիկ երկինքով: (Ո՛վ գիտէ այն ըտպէին գուցէ երկինքը խակ գեղեցիկ էլ չէր): Երկուսներս էլ երբոր խաբում էինք, բայց երկուսներս էլ գիտէինք, որ ստում ենք ասում: Իմ միտքը զբաղուած էր նորանով, նորա միտքը զբաղուած էր ինձանով: Ուրիշ ոչինչ. ոչ երաժշտութիւն և ոչ էլ երկինք: Աւելի յարմար ժամանակ չէին կարող գտնել իմ սիրտը պարզելու (թէ և տեղը այնքան էլ յարմար չէր): Ես շտապեցի սգտուել դէպքով: Ես գիտես ինչպէս, ոչ խօսակցութիւն, ոչ բանաստեղծական Ճարտարաբանութիւն, ոչինչ: Ահա ինչպէս—Լիզայի ձեռում կար մի վարդ: Ես խնդրեցի այդ վարդը նորանից: Նա առաջարկեց ինձ վարդը և կրկին չետ քաշեց ձեռը: Ես բռնեցի նորա ձեռից, որ այժմ լսեմ վարդը: Նա ընդդիմացաւ, բայց վարդը մօտեցրեց քթիս, որ հոտ առնեմ: Ես բռնեցի նորա բազուկից և, փոխանակ վարդից հոտ քաշելու, մի տաք համբոյր կրպչըի նորա սիրուն մատերին: Նա ձեռը արագութեամբ չետ խլեց, բայց ես աչ ձեռով գրկելով նորա մէջքը, այս անգամ համբուրեցի երեսը: „Ի՛նչ էք անում, խելագարուել էք ինչ է՞“,—ասաց նա, երբև թէ աշխատելով ձեռից դուրս պրծնել, այն ինչ՝ ինքը մօտենում էր ինձ: Ես ուզեցի խօսքերով արտայայտել իմ զգացմունքը, բայց Լիզան ձեռը դրաւ բերանիս, որ լռեմ: „Սուս, ասաց նա—գիտեմ ինչ ես ուզում ասել, բոմանների մէջ հազար անգամ գրուած մի տատեսակ բառեր“: Ես լռեցի և սկսեցի երբոր եղանից համբոյրներ դրոշմել նորա ձեռքին, թշերին, վզին, գլխին և, մինչև անգամ, հագուստին: Այդ բոլորը կատարվում էր լուռ: Նա քիչ դողում էր, իսկ իմ շրթունքները ցուրտ կարածի պէս կպչում էին ատամներիս

Գրազ կ'դամ, որ նույն ժամին իմ գնդքը շատ չմոռ պիտի լինէր: Անցել էր մի ժամու չափ, մենք ուրախութեամբ այդ դուռ-թենում կ'մնայինք մինչև լոյս: Բայց այդ չէը կարելի և Լիզան առաջինը չվշտցրեց, թէ հարկաւոր է գնալ, եթէ ոչ, հայրը կ'կատածի: Ես նորանից հարցրի, թէ երբ կարող ենք տեսնուել և պատասխան ստացայ, թէ, կարող եմ ամեն օր այցելել իրանց տունը:—„Բայց միայն առաւօտները, ժամը տասնումէկից չետոյ,—ասաց Լիզան,—այդ ժամանակ հայրս կլոբ լրագիրները կարդալու է գնում մինչև երկու ժամը“:

„—Իսկ Եւգենիա Մարտինովնային,—հարցրի ես:

„—Հէշտ է, նորա գաղտնիքն էլ իմ ձեռումս է,—պատասխանեց Լիզան և մենք բաժանուեցինք:

Ցիրուն որ, ես ինչպէս խմացայ շաւտով, Եւգենիան մի չմոռ բոման ունէը մի ինչ որ լպստած ֆրանսի հետ, որին ես մինչև այդ ժամանակ մի անգամ տեսել էի Բագատելի տանը:

Հետեւեալ օրը, նշանակեալ ժամին ես Լիզայի մօտն էի: Մարտին Բուդդոնիչը խսկապէս որ տանը չէը: Եւգենիան տանն էը, ինչպէս չետոյ Լիզան ասաց, բայց իմ ներկայութեամբ չերևեցաւ: Լիզան նստած էր դահլիճում, մի հայելին դիրք ձեռքում բռնած: Երբ ես ներս մտայ, նա շվմորուած, գլուքը մի կողմ ձգեց:

—Մրրիկ հայելին գետես,—եղաւ իմ առաջին հարցը:

„—Շատ քիչ, բայց ուզում եմ սովորել:

„—Չէի սպասում:

Մենք նայեցինք իրարու և հասկացանք միմեանց միտքը: Կէս րոպէի չափ մենք լուեցինք:

„—Արշակ,—ընդհատեց յանկարծ մեր լռութիւնը Լիզան, առաջին անգամ արտասանելով իմ հայելին անունը: Բայց այդ Արշակ բառը Լիզան արտասանեց մի այնպիսի լուրջ եղանակով, որ ես մի քիչ վախեցայ:

„—Արշակ,—շարունակեց նա,—ես կարծում եմ, որ այսուհետև կարող ենք դէն ձգել մեր դիմակները և խօսել պարզ ու անկեղծ:

„—Մրրիկ մինչև հիմայ մենք դիմակներ ունէինք,—հարցրի ես զարմացած:

„—Ո՛չ թէ դիմակ, այլ մի թեթև քող, որի տակից շատ պարզ երևում էը մեր խսկական դէմքը: Մենք վաղուց էինք լրարու սիրում, դա դու էլ գիտէիր, ես էլ, բայց դարձեալ այդ քողը պահում էինք: Նա անհրաժեշտ է սիրահարուածներին մինչև երկուսից ժամը, այնուհետև աւելորդ է: Լսիր, ես կամենում եմ քեզ ծանոթացնել Լիզայի հետ, որին դու սիրում ես: Ցետոյ պահանջելու եմ քեզանից, որ դու էլ ծանոթացնես ինձ Արշակի հետ, որին ես սիրում եմ:

Ես դլուխս շարժեցի, թէ համաձայն եմ: Լիզան շարունակեց.

„—Երեկ տուն վերադառնալով, ես մինչև գիշերուայ կէսը մտածում էի քեզ վերայ: Ես մտածում էի՝ արդեօք որ սիրը հաստատ է թէ ոչ: Չ'կարծես, որ վայրկեան անգամ կասկածել եմ, թէ մի գուցէ դու ևս պատկանում ես այն թեթեւամիտների շարքին, որոնք հարստահարուելի առաջ դիմակ հագած, ծաղրածուի դեր են կատարում փափուկ օժիտի համար—Ամենևին: Ես միայն մտածում էի, արդեօք սիրդիս եմ ինձ, թէ այդ մի ժամանակուայ յափշտակութիւն է քո կողմից, որ շուտով պիտի անցնի: Բայց վերջըի այս ամէն ու կէսուայ մեր ծանոթութիւնը, քննեցի առաջին օրից մինչև այժմ քո վերաբերութիւնը դէպի ինձ և զգացի, որ չիրաւի քո սիրը հաստատ է և անկեղծ: „Զգացի“ եմ ասում, որովհետև ես մեծ հատուած ունիմ դէպի իմ զգացմունքների անոխակալութիւնը: Ես խորհրդաւոր հայեացքները, քո գոյնի փոփոխութիւնը, վերջապէս տասն օրուայ քո բացակայութիւնը, երբև մի մի զօրեղ վկաներ, կենդանացան իմ առջև և վերջը վճռեցի նորանով, որ ահա, ինչպէս տեսնում ես, քո գրկումն եմ:

Ես Լիզայի խօսքը ընդհատեցի մի ջերմ համբոյրով:

„—Սպասիր, մի տաքանար,—շարունակեց նա:—Ջեմ թագցնում, որ հենց առաջին անգամից, երբ քեզ տեսայ, մի ինչ որ զգացմունք ծագեց իմ մէջ: Ես պատի քո մէջ մի այժ, որը ինձ մղում էր դէպի քեզ: Պատճառները փախչելու, քո բացակայութեան ժամանակ իմ տրամելու (ես ստա էի ասում, թէ հիւանդ եմ) պատճառը ոչ թէ դու էիր, այլ այն այժը, որը ես զգում էի քո մէջ: Ինչ է այդ այժը, ես պարզ չ'գիտեմ: Մինչև այն օրը իմ ծանօթ տղամարդկի բոլորն էլ ինձ համար մի մի անհնչան արարածներ էին, որոնց մէջ չէի գտնում այդ գրաւիչ զօրութիւնը, որը միանգամից հպատակացրեց իմ սիրտը: Արշակ, շատերն են ինձանով գրաւուել: Ես չեմ ասիլ, որ ամենքն էլ ինձ և իմ չիւսուն հազար օժիտը դրել են կշռի մի նժարում, իսկ իրանց միւս նժարում:—Ո՛չ, եղել են և անկեղծ սիրողներ, բայց ոչ մեկը նոցանից չի կարողացել հպատակեցնել ինձ: Կրկնում եմ Արշակ, ես չ'գիտեմ թէ ինչ է այդ զօրութիւնը, ես նորան գտնում էի միայն վիպական հերոսների մէջ:—Բայց այժմ համոզուած եմ, որ նա կ'պարզվի, երբ դու կ'պատմես ինձ քո անցեալը, ներկան, քո պաղատիարներդ, նպատակներդ, մի խօսքով բոլորը բոլորը, առանց մի որ և է մանր կէտ թագցնելու: Լսում ես, դու պիտի բոլորը ինձ համար պարզես: Ես քո գրկումն եմ այժմ, կ'նշանակէ քեզ եմ պատկանում, բայց ես ուզում եմ իմանալ, թէ ով է իմ տէրը և դու պարտաւոր ես ծանօթացնել ինձ նորա հետ:

Այդ խօսքերից չետոյ, Լիզան ձեռը դրաւ ձեռիս երեսին և աչքերը չառեց աչքերիս: Կարծես, թէ նա սպասում էը, որ ես մի քանի րոպէում պատմեմ բոլոր իմ, ինչպէս ինքն էը ասում, „անցեալը, ներկան, ապագան, դաղափարները, նպատակները“: Հէշտ է ասել բերանով:

Ես պատասխանեցի, թէ առաջներիս ժամանակ շատ կայ և ես պատրաստ եմ պարզել իմ կեանքը:

„—Հէնց այսօրուանից,—հրամայեց նա:

„—Հէնց այսօրուանից,—համաձայնեցի ես:

—Ցետոյ սկսեցի պատմել Լիզային, թէ ովքեր են իմ ծնողները, ինչ կրթութիւն եմ ստացել և այլն և այլն:

„—Իսկ ինչ գաղափարական նպատակներ ունես,—հարցրեց Լիզան, երբ են աւարտեցի իմ պատմութիւնը:

Ես ասացի, թէ դժուար է մինչդամիս պատասխանել այդ հարցին, որովհետև շատ խնդիրներ դեռ ինձ համար մութ են:

„—Քանի տարեկան ես,—հարցրեց նա յանկարծ:

„—Քսան և ութերորդումն եմ:

„—Մրրիկ այդ հասակում դեռ քեզ համար մութ խընդիրներ են մնում:

„—Կեանքը շատ բարդ խնդիր է Լիզա, նորան ուսումնասիրելու համար տասնեակ տարիներ են հարկաւոր:

„—Որոշ նպատակներ և գաղափարներ ունեցող մարդը իւր շրջապատող կեանքը շուտ կարող է ըմբռնել:

Ես սկսեցի մանրամասն բացատրել, թէ դորա համար հարկաւոր է ունենալ ձիրք, այսինքն դիտողական ձիրք: Խոստովանեցի, թէ ինձ նման հասարակ մահկանացուները դեռ շատ պիտի ապրեն, որ ճանաչեն կեանքը, թէ նոյն իսկ տաղանդաւոր մարդիք մեծ մասամբ սխալվում են, երբ

շատ եղբայրութիւններ են անում կեանքի լաւ կամ վատ երևոյթների մասին: Մի խօսքով երկու ամբողջ ժամեր ես տաքացած բացատրեցի իմ մտքը Լիզային: Արդէն ուշ էր և Մարտին Բուդդանիչի Ճաշին վերադառնալու ժամանակը մօտեցել էր: Ես բարձրացայ տեղիցս, որ հրաժարական տամ, բայց Լիզան լինձ պահեց:

„—Լսիր,—ասաց նա—դու չես նեղանում, որ քեզ գաղտնագողի եմ ընդունում լինձ մօտ:

„—Ամենևին, եթէ քաշվում ես Հօրիցդ:

„—Ես նորանից չեմ քաշվում, բայց յարգում եմ և առ ժամանակ պիտի այդպէս տեսնուենք: Հայրս կորցրել է իւր հաւատը դէպի մեր երևտասարդները: Նորան յայտնի է մեր սէրը և կասկածում է, որ մի դուցէ դու էլ լինձ վերայ օժիտի մտքով ես նայում: Բայց նա քեզ գովում է և դու կարող ես երեք չորս օրը մի անգամ նորան այցելել:

Մենք բաժանուեցինք: Ես սկսեցի մտածել Լիզայի առաջ ղօրութեան մասին: Դա լինչ մի ղօրութիւն է իմ մէջ, որը հպատակեցնում է նորան: Որտեղ է սովորել Լիզան այդպէս դատել, դէքերից, թէ կեանքի վարձն է նորա մէջ յղացրել այդ ամենը: Ոչ է Լիզան, լինչ տեսակ արարած է, որ մինչև այժմ ոչ ոքի չի հպատակուել և այժմ նրբ սիրտը տալիս է լինձ, ոչ թէ լինձ, այլ այն ղօրութեան, որը իմ մէջ ղգում է: Բանի այդ հարցերը լինձ զբաղեցնում էին, այնքան Գէորգ, Լիզան իմ աչքում բարձրանում էր և դառնում մի անհասկանալի արարած:

Ես ամեն օր յաճախում էի իմ սիրեցեալին, իսկ երեք չորս օրը մի անգամ, նորա պատուէրով, Մարտին Բուդդանիչին: Մարտին Բուդդանիչը, երևի զգալով իմ կողմից ևս մի թեթև սառնութիւն դէպի լինքը, այս անգամ դարձեալ սկսեց վրաբը առ վրաբը մտնենալ լինձ: Նորա խօսակցութեան և վիճաբանութեան համար մի սհադին ևհետաքրքրելի տպաւորիչ էր բացուել: Դա Ռուս-Տաճկական պատերազմն էր, որը այն ժամանակ նոր էր ծագել: Իսկ Եւգենիան շարունակում էր լինձ հալածել իւր ծաղրող հայեացքներով: Այդ օրիորդը քանի գնում, այնքան աչքիցս ընկնում էր, նա մանաւանդ այն օրից, երբ ես տեսայ նորա հաւանած վիճացուն: Դա մի լպստած ֆրանտ տղայ էր վրաբրիկ շամամաձև գլխով, որից միշտ Violet de Parme-ի հոտ էր գալիս: Ինչ գործ էր և ով էր այդ տղան—ես չգիտէի և չեմ էլ հետաքրքրվում, բայց հագուստից բանից երևում էր, որ հարուստ մարդու որդի էր: Կարճահասակ, աչքերը նեղ և երկար, ճակատը տափարակ, երեսը ոսկրած և ականջների առաջ մի մի մատնաչափ մազեր թողած, իւղած ևս մազերը նեղ ճակատի վերայ երկու կտոր ոլորած և կպցրած կաշինահա նորա կերպարանքը: Իսկ մի բան, որը լինձ վրդովեցնում էր—դա նորա նեղ, պատրի—պատրի վարդնկին էր: Ամեն անգամ նա բակկալաւրեաւ վերայ նստելու ժամանակ, ես ակամայ նայում էի նորա ճնիների աչքին, ուսումնասիրելով, որ ահա վարդնկը կ'պատռտուի: Խօսակցութեան ժամանակ նա ուղղութիւն տնէր ձեռքերով զանազան քեմոկան շարժումներ անել, կրծքին խփել և տակ տակ մազերը ուղղել և այլն: Մի խօսքով, ես այդ տղին չէի սիրում և նա էլ 'ի հարկէ լինձ չէր սիրում: „Ինչ սիրտ և խելք կարող է տնենալ այդպիսի ճաշակ ունեցող մի օրիորդը"—ասում էի լինքս լինձ: Բայց ինչ և իցէ ես ուրախ էի, որ Եւգենիան զբաղուած լինելով այդ զարդարած խաղալիքով, չէր խանգարում մեզ, և ես ամեն օր կարողանում էի Լիզայի հետ առանձնանալ դահլիճում և երկար խօսել: Օրից օր իմ սէրը տաքանում էր դէպի Լիզան և ես աւելի ու աւելի սուղ կապով էի կապվում նորա հետ: Էհ երեխայութիւն երեխայութիւն: Մի նախատ տուր Գէորգ, իմը վերջացել է:

Գէորգը լսկոյն առաջարկեց և Արդաս Պետրովիչը նախատը վառելով, մի քանի վայրկեան նեց: Յետոյ նա շարունակեց.

—Առաջ ես, Գէորգ, այնքան էլ չէի սիրում խօսել և աւելի լուռ և մտայլ մարդ էի, քան թէ խօսող և ուրախ: Բայց Լիզայի հետ բացատրուելուց յետոյ, ես դառել էի շատախօս կաչաղակ: Դու չ'կարծես որ ամենքի հետ:—Ո'չ միայն և միայն Լիզայի հետ և այդ ոչ թէ այն պատճառով, որ Լիզան լինձ պատուերել էր պարզել նրան իմ մտքերը, այլ հենց ես լինքս զգում էի մի տեսակ նեղքին պահանջ: Ես անհնարին էի համարում Լիզայի առաջ թագցնել մի որ և է անձնական կէտ իմ իմացածից: Այդ պատճառով ոգևորուած, ժամերով խօսում էի և չէի զգարանում: Մի ամսուայ ընթացքում Լիզան բոլորովին ծանօթացաւ լինձ հետ, և ես չունէի գաղտնիք, որ նորան յայտնի չլինէր: Բայց անցաւ առաջինն ամիսը մեր սիրահարութեան և այնուհետև, սիրելի Գէորգ, սկսեց ամեն լինչ փոխուել, տակն ու վերայ լինել: Ահա լինչպէս:

Արդաս Պետրովիչը գատարկ շիշը վերցրեց և գլխիվայր պահեց: Յետոյ նա շիշը դրաւ սեղանի վերայ, մի քանի վայրկեան լռեց և ծխամորճով ասաց.

—Գէորգ, պարսկական դավիչը մի հիանալի սովորութիւն ունի: Նա հէքեաթ ասելիս, չանկարծ ամենահետաքրքիր տեղում լռում է: Ծողովուրդը անհամբերութեամբ նայում է նորա բերանին, իսկ նա իւր չեռչեքը պահելով ունկնդիրների առաջ՝ ասում է. „Դաղլղ ասվան չախ, հաղրաւկ Աբբաս եօլընդա ղոյ քիր պոչ ասլանդ քուրա": Դու պարսկերէն գիտես:

—Ո'չ,—պատասխանեց Գէորգը:

—Ասում է. „պատմութիւնս հաւանող անձը, մարգարէ Աբբասի անունով թող մի քան ձգի այստեղ": Եւ դավիչը չի շարունակում հէքեաթը, մինչև իւր ուզած գումարի ստանալը: Հասկացար Գէորգ,—աւարտեց Արդաս Պետրովիչը ժպտալով և մատնացոյց անելով գարեջրի շիշին:

Գէորգը ծառային կանչելով, հրամայեց մի շիշ և գարեջուր բերել: Ծառան բերաւ շիշը և Արդաս Պետրովիչը մի քաժակ լցրեց և մնացածից դարձրեց:

—Ну-съ, իմ սիրելի Գէորգ,—շարունակեց նա, բերանը սրբելով մետաքսեայ թաշկինակով,—լինչպէս ասացի, ես պատրաստեցի իմ գլուխը և սիրտը Լիզայի առաջ, այսինքն, ես արի մի աննեղելի կնմարութիւն, որ լինձ շատ վնասեց, բայց շատ էլ օգուտներ տուաւ վերջը: Թէ լինչ օգուտները տուաւ,—այդ կետս կնմանան լինդ, բայց ես կ'պատմեմ, թէ լինչպէս վնասեց: Երբ Լիզան մինչև ոսկորներս ուզեղը լինձ ճանաչեց, այնուհետև ես նկատեցի մի լինչ որ փոխուել էր: Դա ոտնուել էր դէպի լինձ, այլ մի լինչ որ անորոշ վերաբերութիւն էր, որ իմ մէջ սիրում է, բայց առաջուայ պէս այլ ևս չի հրճվում լինձանով: Շատ անգամ, ես խօսելու ժամանակ, նկատում էի նորա դէմքում մի ժպիտ, որը արտայայտում էր մի տեսակ կասկած դէպի իմ խօսքերի ճշմարտութիւնը: Այդպիսի րոպէներում, ես շարունակ նայում էի նորա երեսին, որ հասկանամ միտքը և կարծում էի, որ նա կ'շփոթուի այդ հայեացքով և լինքը կը դադարէ իմ առջև իւր կասկածի մասին: Բայց ես ոչ նորա միտքն էի լաւ հասկանում և ոչ էլ իմ ուր հայեացքներն էին նորա վերայ ազդում: Այդ նկատելով, ես լինքս էի սկսում զղջալ: „Ինչ մանրակրկիտ մարդ եմ",—կրկնում էի լինքս

ինձ, բայց մի և նույն ժամանակ դարձեալ սկսում էի կասկածել: Պիտի ասեմ Գէորգ, որ մինչև այդ կասկածանքը իմ մէջ չգտնուելը, մեր բացատրութիւնից յետոյ, ես էլ փոքր առ փոքր փոխուում էի դէպի Լիզան: Բայց իմ փոփոխութիւնը այն չէը, ինչ որ Լիզայինը: Ահա որն էը իմ փոփոխութիւնը: Ես քիչ առաջ քեզ համաը նկատացրեցի Լիզայի կերպարանքը և դու տեսար, որ նա թէև ոչ գեղեցիկ, բայց ընչպէս ասացի հրաշալի արարած է: Նա չափազանց ինձ, կուրացրեց մանգամայն և ես հնացած չի գտայ ոչ մի պակասութիւն նորա մէջ: Առաջին անգամ իմ մէջ ծագեց մի ցանկութիւն. „երանի թէ քեզ հետ խօսեմ"—ասացի մտքումս: Երբ այդ ցանկութիւնս կատարուեց և երբ նա երկրորդ անգամ գաշնամուրի վերայ նստում էր և ես նայում էի նորա մատներին, „երանի թէ կարողանամ գրաւել քեզ, Լիզա"—մտածեցի ես: Երբ մի փոքր համոզուեցի, որ գրաւել եմ Լիզային, „երանի թէ կարողանամ համբուրել քո ձեռքը", ասացի ինձ: Իսկ երբ ստացայ իրաւունք նորա ձեռքերին էլ, թշերն էլ, շրթունքներն էլ անթիւ անգամ համբուրել, այդ ժամանակ միայն ես սկսեցի գնել Լիզայի գնդքը և շատ պակասութիւններ գտայ այդ գնդքի վերայ: Մի օր ինձ թւաց, թէ նորա քիթը քիչ կարճ է, մեւս օրը ես նկատեցի, որ նորա ճնոտը մի փոքր մեծ է և չի համապատասխանում գնդքի ուրիշ մասերին և այդպէս, ես ամեն օր մի մի ֆիզիքական պակասութիւն էի գտնում Լիզայի մէջ: Այդ ամենը ես յայտնում էի իրան, բայց մի և նոյն ժամանակ իմ սէրը դէպի նորա էր պակասում: Ընդհակառակը օր ըստ օրէ նա գրեթէ նուում էր: Բայց գարնանալի բան, Գէորգ, որի վերայ արժէ մտածել:—Երբ իմ մէջ ծագեց կասկած, որ Լիզան քիչ փոխուել է գնդի ինձ, նորա գնդքի այդ քայլը պակասութիւնները խոյն անհետացան իմ աչքում և ես գտնել Լիզային գտայ մի անհնար հրեշտակ: Թէ ինչու և ինչ պատճառներից էին առաջանում այդ փոփոխութիւնները,—ես չեմ կարող բացատրել: Դա խորը հոգեբանական մի խընդիր է, որի վճռելը իմ գործը չէ, միայն ես ասում են այն, ինչ որ զգացել եմ:

—Այդպէս, Գէորգ, ես Լիզայի մէջ նկատեցի մի տեսակ փոփոխութիւն դէպի ինձ: Կարծում էի գուշակել, որ այդ փոփոխութիւնը պիտի արմատապէս փոխէր իմ կեանքը, հնձնայատակ անէր կնոջ վերայ կազմած բոլոր իմ գաղափարները այնպէս, որ այսօր ես նորա վերայ նայէի բոլորովին Թշնամական աչքով: Բայց այդ այդպէս եղաւ, Գէորգ, և ուրիշ կերպ չէր կարող լինել: Իմ նշանակութիւնը Թուլացաւ Լիզայի աչքում այն ժամից, երբ նա ճանաչեց ինձ, երբ նորա համար պարզուեց իմ հատարակ մահկանացուի կեանքը: Աղատասիրական գաղափարներով չափազանց, ես աշխատում էի նայել Լիզայի վերայ իբրև ինձ հետ հաւասար մի արարածի վերայ: Ես չէի օգտվում իմ մտաւոր գարգացման առաւելութիւնով և չէի ձգտում բարձրից նայել նորա մտաւոր կարողութեան վերայ: Մենք թէ և շատ բաներում համաձայն չէինք իրար հետ մտքերով և ես շատ անգամ հերքում էի կեանքի վերայ ունեցած նորա հայեացքները: Բայց մի և նոյն ժամանակ խիստ չարգում էի այդ հայեացքները և երբէք, երբէք չէի արհամարհում նորանց: Բայց, հաւատացիր Գէորգ, ես որքան չարգում էի Լիզայի հայեացքները և որքան երբեմն խանարհվում էի նորա առաջ, նոյնքան նա աշխատում էր ինձ վերայ բարձրանալ և նոյնքան նա ձգտում էր արհամարհել իմ մտքերը: Այդ բոլորը ես Արգոսի աչքերով տեսնում էի և ոչ մի կէտ բաց չէի թողնում, տեսնում էի, բայց մի և նոյն ժամանակ չէի կարողանում պատճառը գտնել: Որպէս դի վերջ դնեմ Լիզայի այդ անախորժ վարմունքին դէպի ինձ, ես վճռեցի մի համարձակ քայլ անել: Դորանով մի և նոյն ժամանակ կամենում էի միանգամից լմնանալ նորա մէտքը:

„—Լիզա,—հարցրի ես մի օր, երկար վիճաբանութենից յետոյ,—Լիզա, երբ պիտի վերջնականապէս վճռուի մեր վիճակը:

Այդ հարցը ես առաջարկեցի չանկարծ և Լիզան չ'հատկացաւ նորա մէտքը: Նա զարմացած նայեց երեսիս և հարցրեց:

„—Ի՞նչ ես ուզում ասել:

„—Ես կամենում եմ լմնանալ, Թէ երբ պիտի մենք պըրոպակութենք,—պատասխանեցի ես համարձակօրէն և շտապով, որպէս դի չտայ չ'վհատեմ և վոշնմանեմ:

Լիզան աչքերը խոնարհեցրեց և պատասխանեց.

„—Չ'գիտեմ:

„—Իսկ ես կարծում եմ, որ միայն դու գիտես:

„—Համբերիր:

„—Մինչի՞ հօրդ կողմից արգելք կայ:

„—Ես չանձնուած եմ իմ իրաւունքին և ոչ ոք չի կարող իմ կամքին հակառակել:

„—Ուրեմն էլ ինչ պատճառ կայ ուշանալու:

„—Դեռ համբերիր,—կրկնեց Լիզան մի այնպիսի հրամայողական եղանակով, որ ես այլևս չի համարձակուեցի երկարացնել: Նոյն օրը ես բաժանուեցի Լիզայից տխուր և աչքունքս թաշած: Սկայ տուն Լիզայի անորոշ պատասխանը ինձ սկսեց տանջել, հըմ, Գէորգ, տանջել տանջել: Ինչ տեսակ մի արարած է Լիզան,—մտածում էի ես: Ինձ թւում էր, Գէորգ, Թէ նա ինձանից հեռանում է, ընչպէս երկնքի երեսով շարժուող ամպերի ստուերը: Ես ձգտում էի հասնել այդ ստուերին, պահել նորան, չ'թողնել առաջ շարժելու: Սակայն չէի կարողանում, հարկաւոր էր նախ ամպերը պահել, որպէս դի նորա ստուերը կանգնի, իսկ ես շատ է հեռու էի ամպերից: Նորա երկնքումն էին, ես երկրի երեսին:—Դա Լիզայի անգուսթ սերտն էր: „Ի՞նչ պիտի անեմ, ինչ կարող եմ անել,—կրկնում էի անդադար, գլխես մազերը փետելով: Ես երկար ժամերով մտածում էի այդ մասին, բայց ոչ մի իմ որոշին նպատակաւոր եզրակացութեան չէի հասնում: Օրըստօրէ ինձ համար աւելի ու աւելի պարզվում էր, որ Լիզայի սէրը Թուլանում է դէպի ինձ: Ինչու, ինչ էր պատահել, ինչ մի չար զօրութիւն չանկարծ փոխեց Լիզայի սերտը, կամ ինչ մի աներևոյթ ոյժ ինձ կերպարանափոխեց Լիզայի աչքում: Մինչ ես նախկին Արշակը չէի, որի մէջ նա զգում էր մի ինչ որ ձգտողական գօրութիւն: Ձշմարիտ էր ասում Լիզան, Թէ կեղծաւորում էր, կամ գուցէ դա մի ժամանակաւոր չափշտակութիւն էր նորա կողմից: Բայց չէ, մինչ Լիզան կարող էր չափշտակել, այն Լիզան, որի սերտը մինչև քանի ու վեց տարեկան հասակը ոչ մի երիտասարդի համար չէր բաբախել: Կամ չէ, գուցէ բաբախել էր, բայց Լիզան պինակ էր հագնում իմ առջև, սուտ էր ասում, որ իմ աչքում իրան ցոյց տայ իբրև մի հերոսուհի: Կարող ես զգալ, Գէորգ, Թէ որքան ինձ տրորում էին, չարչարում էին այդ չարագուշակ հարցերը: Ես չեմ կանգնել, երկարօրէն քեզ նկարագրելու, Թէ ինչ էի զգում այդ օրերում, բայց այդքանը կ'ասեմ, որ իմ աչքում ամենայն ինչ անհետացել էր, բացի Լիզայից: Իմ ուղեղը կաշկանդուած էր նորանով: Ես սկսեցի ատել ամեն ինչ, նոյն իսկ ինքս ինձ, բացի Լիզայից: Ես ատում էի մինչև անգամ անմեղ բնութիւնը և նորա գեղեցկութիւնը: Լուսին երեկո-

նեը ես, հակառակ իմ ծովորութեան, չէի դուրս գալիս փողոց: Առաջ այդ երեկոները ինձ վերայ ահեղ ծանր, բայց ախորժալի տպաւորութիւն էին անում, իսկ այժմ աննկարագրելի գառն տղեցութիւն էին անում: Այդպիսի երեկոները ես փախչում էի տուն և փակվում սենեակումս, որ չ'տեսնեմ լուսնի երեսը:

Այդպէս անցաւ, Գէորգ, մօտ մինչև երեք շաբաթ—շարունակեց Արզաս Պետրովիչը հառաչելով—ես շարունակում էի տեսնուել Լիզայի հետ, բայց մի՛շտ նորա դէմքում նկատում էի նոյն կասկածաւոր ժպլիտը, մի՛շտ նա իմ հարցերին տալիս էր անորոշ պատասխաններ կամ ամենևին չէր տալիս: Վերջապէս մի օր պարզուեց բանը, Գէորգ, և ես գըտայ գաղտնիքը: Բայց Թոյլ տուր Գէորգ, քիչ հանգստանալ: Ես շատ լաւ եցի, գուցէ ձանձրացել ես, կարող եմ մնացեալը մի ուրիշ անգամ պատմել:

—Շատ է մնում,—հարցրեց Գէորգը:

—Քիչ է մնում, բայց վերջը ես մէջտեղ պիտի բերեմ մի զարմանալի անձնաւորութիւն: Շարունակեմ:

—ԵԹԷ այդքան և այ լաւ ես, ես դարձեալ չեմ ձանձրանալ, վերջացրու,—պատասխանեց Գէորգը, մի ծխախոտ վառելով:

Արզաս Պետրովիչը մի վոքր գարեջրից կում արաւ, ծըխախոտ վառեց և մէջքը բազկաթոռին տալով, սկսեց լուռ ու մունջ ծխել: Անցան մի քանի րոպէներ, նա հանգըցրեց ծխախոտը և կրկին շարունակեց.

Մի օր, երեկոադէմին, ես գնացի Բաղամովներըի տուն: Այդ այցելութիւնը պատկանում էր Մարտին Բուդդանիչին: Քանի ժամանակ էր նորա երեսը չէի տեսնում: Ես ծառային հրամայեցի յայտնել իմ մասին, և մի քանի վայրկեանից ետոյ ծառան վերադառնալով, մի հեգնական ժպիտ երեսին, (դուցէ ինձ այդպէս թուաց) հրաւիրեց դահլիճ: Ես նեը մըտայ: Մարտին Բուդդանիչը մէջքը բազկաթոռին տուած, ծըխում էր իւր երկար չիբուխը: Նորա աջ կողմում նստած էր Եւգենիան իւր լրպստածի հետ, որը մի ինչ որ գիրք էր թերթում ձեռքում: Լիզան նստած գաշնամուրի դէմ, շտապով դէս ու դէն էր պարանում նոտաների տետրը: Մարտին Բուդդանիչի դէմ ու դէմ նստած էր մի, ինձ համար անծանօթ, հիւր: Երբ ես ներս մտայ, Մարտին Բուդդանիչը բարձրացաւ տեղից ինձ բարևելու: Լիզան ինչ պաշտօնական քաղաքավարութեամբ մօտեցաւ և հարցրեց շտապով. „ինչպէ՞ս էք“: Ես հերթով ամենքին ձեռ տուի: Երբ հերթը հասաւ Եւգենիային, նա ինձ վերայ ձգեց առաջուանից աւելի հեգնական և, կարող եմ ասել, անպատկառ մի հայեացք: Իսկ նորա ֆրանտը իւր չնաշար ընդերքը բացեց և նեղ ճակատի տակից աղեղնաձև աչքերը ինձ վերայ չռեց:

—Սերգէյ Միխայլովիչ, ներկայացնում եմ ձեզ բարեկամիս, բժիշկ Արզաս Պետրովիչ Մախաուդեանին,—ասաց Մարտին Բուդդանիչը, ինձ մատնացոյց անելով անծանօթ հիւրին:

Բազկաթոռը ճռռաց, Գէորգ, և նորա մէջքից ծանրութեամբ բարձրացաւ մի հսկայ: Նա մի վոքր իմ կողմ շուռ գալով, քիթ տակ մմմաց իւր ազգանունը և լռեց ու երկար ձեռը մեկնեց ինձ:Ես սեղմեցի այդ հսկայական մատը ձեռը և հազիւ հազ լսելով նորա ազգանունը „Սեթեան“, տեղաւորուեցի բազկաթոռներից մեկի վերայ: Հսկան ուղղելով իւր սև և երկար սիւրտուկի վերջերը, կրկին թաղուեց բազկաթոռի մէջ: Դա մօտ երեսուն ու հինգ տարեկան, Գէորգ, պարթև, լայն թիկունքներով, երկար բազուկներով, լայնոր աչքերով և գեղեցիկ, բայց մռայլ դէմքով մի տղամարդ էր: Նորա երեսից, շարժուածքից և նոյն իսկ հագուստից բուրում էր մի գաղտնի ոյժ: Ես նայեցի նորա կարճ խուպած սև մազերին ու մերուքին, Թանձր բեղերին, որոնք հովանաւորում էին նորա սեղմուած շրթունքները, նայեցի նորա հայկական արծուանման քթին և, չ'գիտեմ ինչու, մտքումս ասացի „լաւ է“: Լիզան գաշնամուրը թողած, որի վերայ մինչև իմ գալը պատրաստվում էր ածելու, և եկաւ նստեց մեր շարքում, հսկայն դէմ ու դէմ: „Ինչու իմ դէմ չէ նստեց„—անցաւ իսկոյն իմ մտքով, բայց ես իսկոյն էլ մոռացայ այդ: Մարտին Բուդդանիչը կարճառօտ կերպով ծանօթացրեց ինձ և նոր հիւրին իրարու հետ: Ես նորա հատ ու կտոր բացատրութիւններից լմացայ, թէ Սեթեանը իւր ամենահին բարեկամներից մեկն է և նոր է վերադարձել Գերմանիայից, ուր ուսումնասիրել է մի ինչ որ մասնագիտութիւն և այժմ մտադիր է Թիֆլիսի շրջակայքում գործարան բանալ: Թէ ինչ էր նորա մասնագիտութիւնը և ինչ գործարան պիտի բանար,—դա ես չիմացայ: Ինքը Սեթեանը ոչինչ չ'խօսեց: Փոքր առ փոքր մեր խօսակցութիւնը մանր բաններից անցաւ աւելի նշանաւոր հարցերի վերայ: (Մարտին Բուդդանիչի ներկայութեամբ անկարելի էր բաւականանալ չնչին հարցերով): Սեթեանը լուռ էր, մինչն երբեմն Մարտին Բուդդանիչի ասց կամ ասն հարցին պատասխանում էր ասց կամ ոչ և ուրիշ ոչինչ: Նա ոչ ոքի երեսին չէր նայում: Բայց երբ նա Թանձր բեղերը բարձրացնում էր, որ արտասանի իւր „այո“-ն կամ „ոչ“-ը, ամենքը նայում էին նորա երեսին: Որովհետև ամենքի հայեացքների կենտրոնը նա էր, վասն որոյ ես և ես, կարծես թէ ինստինկտաբար, մեկ էի անում նորան: Ցերեկի, Գէորգ, արժէր նայել այդ առնական դեղեցիկ, մռայլ և գրաւիչ դէմքին: Բայց ես այնքան հաւատ չէի ընծայում այդ դէմքին և զգում էի, որ նորա զօրութիւնը լուսեցան մէջ է և երթ Սեթեանը սկսի շատ լաւ եցել, իսկոյն կ'կորցնի իւր նշանակութիւնը: Ես ներում էի ամենքին և նոյն իսկ ինձ, որ այդպէս ստրկաբար հպատակվում էինք այդ մարդին, բայց չէի կարողանում նեցել միայն Լիզային: Ինչու է նա այդպէս խորը մտիկ անում այդ նոր հիւրին, մինչդեռ սա արժան էլ չի համարում եցոը շուռ տալ դէպի նորա կողմ: Դեռ պա ոչինչ. ինչու ինձ վերայ չի ուզում նայել Լիզան: Ինչու, երբ նա մեզ մի հարց է առաջարկում և երբոր ես եմ պատասխանում այդ հարցին, նա ուշադրութիւն չի դարձնում ինձ վերայ: Կասկածը դարձեալ սկսեց սրտին նման ուտել իմ սիրտը, ծագեց իմ մէջ մի նոր, մինչև այդ ժամանակ անծանօթ, զգացմունք, որը աւելի վառնգաւոր էր քան երթ հասարակ կասկածը: Դա այն զգացմունքն է Գէորգ, որը մի քանի գրողներ, ինչպէս Ջերնիշևսկին, Բիբլիկով և ուրանք հերքում են՝ զարգացած մարդու մէջ: Չ'հատատաս Գէորգ, սուտ է, այդ մարդիկ իրանք երեւի չեն սիրահարուել և այդ պատճառով չ'գիտեն, որ ինչ տեղ կայ սէր, այնտեղ կայ նոյնպէս և խանդոտութիւն: Մեկը առանց մեւսի անհասկանալի է և որքան զօրեղ է մեկը, նոյնքան զօրեղ է և մեւսը: Է'հ, ինչ երկարացնեմ Գէորգ, ես տանջվում էի, բարկանում էի Լիզայի վերայ, տաքանում էի ինքս իմ մէջ, շփոթվում էի: Լիզան հասկանում էր այդ, բայց մի և նոյն ժամանակ, կարծես թէ, որ աւելի զօրացնի իմ մէջ այդ նոր զգացմունքը, չէր փոխում իւր վարմունքը: Վերջապէս մեր խօսակցութիւնը փոխուեց բըժշկականութեան վերայ: Այդ տարի Թիֆլիսում մի վարակիչ հիւանդութիւն կար, վասն որոյ ամենքին հետաքրքրեց այդ հարցը: „Ահա վերջապէս իմ ասպարէզը—մտածեցի ես—այժմ

ես կ'դառնամ ամենքի ուշադրության կենտրոն, իսկ քեզ Լիզա ցույց կ'տամ թե ում է չաղթողը»:

„—Աբգար Պետրովիչ,—դիմեց ինձ վերջապես Մարտին Բուդդանիչը,—ինչպե՞ս եք կարծում, ընչու բժշկականությունը անկարող է առնել այդպիսի հիւանդութիւնների դեմ:

„—Դա առողջապահութեան գործն է և ոչ թե բժշկականութեան,—պատասխանեցի ես, ամեն մի բառը առանձին շեշտելով, որպես զի ունենամ իմ ցանկացած ազդեցութիւնը:

Ես նայեցի Լիզային, բայց նա երեսը շուռ տուաւ ինձանից: Դա չմոռնաց ինձ:

„—Մինչև հիւանդութեան երևալը, բայց երբ նա երևեցաւ,—կրկնեց Մարտին Բուդդանիչը:

„—Այնուհետև ի հարկե բժշկականութեան գործն է,—պատասխանեցի ես տաքացած,—բայց թե ինչու չի կարողանում բժշկականութիւնը վերջ տալ այդպիսի հիւանդութիւններին—դա նորանից է, որ այդ հիւանդութիւնների մասին դեռ շատ մութ խնդիրներ կան նորա համար չպարզուած:

Այդ ասելով, ես անգիտակցաբար նայեցի Սեթեանի երեսին: Ինչու, ինքս էլ չ'գիտեի: Իսկ նա դարձեալ ոչ ոքին չէր նայում:

Մարտին Բուդդանիչը չ'բաւականանալով իմ պատասխանով, դիմեց նոր հիւանդին.

„—Ձեր կարծիքը ինչ է Սերգէյ Միխայլովիչ:

Սերգէյ Միխայլովիչ Սեթեանը գլուխը թեքեց բաղկաթոռի մէջքին, ձեռքերը տարածեց աջ ու ձախ, բերերը չամրութեամբ շարժեց և խորհրդաւոր եղանակով արտասանեց չորս խօսք.

„—Բժշկականութիւնը դրական գիտութիւն չէ:

Այնուհետև նա կրկին գլուխը թեքեց կրծքին, ձեռքերը հաւաքեց և լռեց: Ամենքը երանց հայեացքները մեխեցին նորա բերանին, կարծես թէ սպասելով, որ նա շարունակի: Բայց նա լռեց: Ես մտիկ արի նորա երեսին և նա այս անգամ ինձ վերայ մի ահագին ժպտի տպաւորութիւն արաւ: Թուում էր, թէ ոչ մի ույժ չի կարող նորանից աւել խօսքեր դուրս քաշել: Բայց ինչ ասաց նա, ոչինչ—գրեթէ մի և նոյնը. ինչ որ ես ասացի մի քիչ առաջ: Բան ինչու ոչ ոք չ'էր նայեց ինձ վերայ, ոչ ոք նշանակութիւն չի տուաւ իմ պատասխանին: Ինչու այժմ Լիզան ուրախութեամբ նայում է նորա երեսին, կարծես թէ սպասելով, որ այդ ժպտը մի ինչին հայեացք ձգի իւր վերայ:

„—Ի հարկէ,—շարունակեց ես Սեթեանի վերաբերմամբ,—բժշկականութիւնը մաթեմատիքական գիտութիւն չի, նա չունի որոշ և անսխալ ֆորմուլաներ, որոնց հիման վերայ կարողանայ անսխալ եզրակացութիւնները անել: Բայց նա այսու ամենայնիւ գիտութիւն է և շատ օգտաւէտ գիտութիւն:

Ես այդ վերջին խօսքերը աւելացրի տաքացած և ձայնս բարձրացնելով: Դու ինչպես տեսնում ես Գէորգ, անտեղի էին այդ խօսքերը, բայց ես չհամբերեցի և զգալով, որ Սեթեանը ծաղրում է իմ մանկապիտութիւնը, ուզեցի ինձ պաշտպանել: Ախ, երանի թէ պաշտպանած չ'լինէի, երանի թէ ես էլ լռել էի:

„—Նա ինչ գիտութիւն է, որ որոշ եզրակացութիւններ չ'գիտէ անել,—մէջ մտաւ Լիզան, մի սպանող հայեացք ձգելով ինձ վերայ, որը նա լսելուն մեղմացնելով, դարձրեց դէպի Սեթեանը:

Արևն գլխովս տուաւ:

„—Բժշկականութիւնը ես չեմ պերում,—աւելացրեց լպստած ֆրանսը իւր կարմիր ընդերքը ցոյց տալով ինձ:

„—Շատ շահասէր մարդիկ են բժիշկները, նա մանաւանդ հայ բժիշկները,—նորա պրծաւ ատելի Եգենեան, իւր արհամարհական հայեացքը ձգելով ինձ վերայ:

Գուցէ, եթէ զսպէի ինձ, կարողանայի տանել այդ ինսիլտները, բայց ես, Գէորգ, չի զսպեցի և ոչ թէ այդ կոպիտ նկատողութիւնների պատճառով:—Ո՛չ, ես կարող էի Եգենեանի և ֆրանսի նման լպստանների կարծիքը արհամարհել, բայց ես չ'կարողացայ մարսել Լիզայի նկատողութիւնը: Ամենից առաւել ես վրդովուեցի նորա դէմ:

„—Ջարմանում եմ,—ասացի ես բարկութիւնից կարմրելով և շրթունքներս կրծոտելով,—թէ ինչպես համաձայնվում են մարդիկ գատողութիւն անել այնպիսի բաների վերայ, որոնց մասին գրշի հասկացողութիւն չունեն:

Լիզան ժպտաց: Սեթեանը աչքի տակով սառնութեամբ նայեց երեսիս: Եգենեան քրտ քրտ անամօթութեամբ սկսեց ծիծաղել: Լպստած ֆրանսը հետևից նորան: Իսկ Մարտին Բուդդանիչը գարձաւ ինձ և ասաց մեղմութեամբ.

„—Աբգար Պետրովիչ, ներեցէք, ես կարծում եմ, որ Եգենեան և Իվան Տարասիչը (լպստածի անունը այդպես էր) ձեզ վերաբերելու նպատակով չասացին այդ:

Աւելի չեմար դրութիւնս չէր կարող լինել և ելայ մարդը իմ տեղը խոչոն գդակը կ'վերցնէր ու դուրս կ'գար: Բայց ես էլ ժամու չափ ևս նստեցի, որպես զի մի կերպ կարողանամ վրէժս հանել ինձ վերաբերողներից: Բայց այլ ևս ոչ ոք չ'խօսեց: Մարտին Բուդդանիչը այլ անախորժ դէպքի տպաւորութիւնը ջնջելու նպատակով, խնդրեց Լիզային դաշնամուրի վերայ մի բան ածել: Այս անգամ Եգենեան կրծրեց նորա առաջը, որ ինքը խաղայ: Ես մի վրդը լսեցի և չնայ գտակս վերցրի ու ջախջախուած որտով դուրս եկայ, չ'նայելով Մարտին Բուդդանիչի հրաւէրին՝ թէյի սպասելու:

Թէ ինչպես անցկացրի մնացեալ օրը և գիշերը, ես չեմ պատմիլ քեզ, Գէորգ: Բայց հետևեալ առաւօտ վճռեցի՝ գնալ և Լիզայից բացատրութիւն պահանջել:

Սակաւական ժամանակին էր, երբ ես մտայ նորա մօտ: Բարեբաղդաբար նա միայնակ էր: Մարտին Բուդդանիչը կլուբում լրագիրներ էր կարդում, իսկ Եգենեան իւր լպստածի հետ չ'գիտեմ ինչ տեղ էին կորել: Լիզան ընդունեց ինձ սառնութեամբ և հաղիւ հազ իւր մատերի ծայրերը շփելով ձեռիս, հրաւիրեց նստել: Ես վճռեցի խոչոն և եթ սկսել:

„—Լիզա, ես եկել եմ քեզանից բացատրութիւն խնդրելու,—ասացի ես:

„—Ասիր:

„—Ի՞նչ էր նշանակում երեկուայ քո վարմունքը:

„—Ես չեմ հասկանում, թէ ինչ ես ուզում ասել:

„—Դու մի թագցնիլ Լիզա, ուղիղը ասիր, ինձ սիրում ե՞ս Լիզան լռեց:

„—Չե՞ս սիրում, նորա՞ն ես սիրում:

Լիզայի դէմքը շառագունեց: Ես այնքան յուզուած էի, որ Սեթեանի անունը չէի ուզում յիշել:

„—Սկզում ե՞ս, սիրում ե՞ս նորան,—հարցրի ես, բռնելով նորա թևը:

Նա թևը խլեց ինձանից:

„—Ո՞ւմի համար ես ասում,—հարցրեց վերջապես Լիզան վրդովուած:

„—Սեթեանի,—պատասխանեցի ես,հաղիւ հազ կարողանալով արտասանել այդ չարագուշակ անունը:

„—Չ'գիտեմ ինչ հիման վերայ ես դու այդպէս կարծում:

„—Հիմնուելով երեկուայ քո վարմունքի վերայ:

„—Օրինակ:

„—Դու ամբողջ ժամանակ նայում էիր նորա երեսին:

„—Մի՞թէ արգելուած է մարդուն՝ նայել մարդու երեսին:

„—Բայց ինչո՞ւ ինձ վերայ չէիր նայում:

„—Հա հա հա—ծիծաղեց Լիզան:

Ես աւելի բարկացայ:

„—Դու ծիծաղում ես ինձ վերայ Լիզա, դու ծաղրում ես ինձ,—ասացի ես, կրկին բռնելով նորա թևը:

„—Կան հարցեր, որոնց պատասխանը միայն ծիծաղն է,—պատասխանեց նա, կրկին թևը ազատելով ձեռքից:

„—Ուրեմն իմ հարցը շատ յիմար հարց է քո կարծիքով:

„—Չ'գիտեմ, ինքդ դատիր:

Մի քանի վայրկեան ես լռեցի: Չ'գիտէի ինչ ասել:

„—Լիզա, պարզիր ինձ քո միտքը,—խօսեցի ես վերջապէս:

„—Ի՞նչ ես ուզում:

„—Ինձ սիրո՞ւմ ես:

Լիզան գլուխը թեքից կրծքին, մի քանի վայրկեան մտածեց և չանկարծ կրկին բարձրացնելով, վճռողական եղանակով ասաց.

„—Շատ սիրում:

„—Պատճառ:

„—Հա հա հա,—կրկին ծիծաղեց Լիզան անդթութեամբ:

„—Շատ կարծում, որ այդ հարցը ես ծիծաղելի լինի,—ասացի ես ձայնս բարձրացնելով:

„—Աւելի ծիծաղելին չէր կարող լինել,—պատասխանեց նա:

„—Բայց ես քեզանից բացատրութիւն եմ պահանջում:

„—Ես ասացի քեզ, որ շատ սիրում:

„—Պատճառն եմ հարցնում:

„—Կամենո՞ւմ ես որ սարդին ասեմ:

„—Ասիր:

„—Լսիր: Ես քո մէջ այլ ևս չեմ տեսնում այն ոյժը, որը ինձ յափշտակեց, ինձ, որ մինչև քոնն և վեց տարեկան հասակս ոչ ոքով չէի յափշտակուել:

„—Ինչո՞ւ, մի՞թէ ես փոխուել եմ:

„—Չ'գիտեմ, գուցէ դու մի և նոյնն ես, բայց այն օրից, երբ ես քեզ բոլորովին ճանաչեցի, դու իմ աչքում հաւասարուեցիր հասարակ մարդկանց հետ:

„—Մի՞թէ դու կարծում էիր, որ ես մահկանացու չեմ:

„—Այնքան էլ թեթեւամիտ չեմ, որ քեզ անմահի տեղ ընդունէի, բայց ես քո մէջ չեմ տեսնում այն զօրութիւնը, որը հպատակեցնում է կնոջ, որը ստրկացնում է նորան: Տղամարդը պիտի ունենայ այդ ոյժը:

„—Ախար դա ի՞նչ զօրութիւն է Լիզա, որ դու ինքդ էլ բացատրել չես կարողանում,—հարցրի ես խեղդուած ձայնով:

„—Առաջ չ'գիտէի թէ ինչ զօրութիւն է, բայց այժմ պարզուեց ինձ համար: Դա այն զօրութիւնն է, որը տղամարդին պահում է կնոջ համար մի անհատանելի բարձրութեան վերայ: Կինը միշտ պիտի ձգտէ նմանելու այդ բարձրութեան, բայց չ'կարողանայ հասնել: Եթէ հասաւ, այն օրուանից տղամարդը կ'ընկնի նորա աչքում և նա այլ ևս չի կարող սիրել տղամարդին, ինչպէս այժմ ես քեզ չեմ կարող այլ ևս սիրել:

„—Լիզա, դու հերոս ես որոնում, երևի վիպասանութիւն շատ ես կարդացել:

„—Դիցուք թէ հերոս եմ որոնում, մի՞թէ չի կարելի գտնել:

„—Ամենևին: Հերոսները գոյութիւն ունեն միայն վէպերում: Վիպասանի երևակայութիւնն է ստեղծում նոցա: Դուրս բեր գլխից այդ ցնորքը:

„—Քաղաքավարութեան սահմանից մի դուրս գալ,—ընդհատեց ինձ չանկարծ Լիզան հրամայողական ձայնով: Ես ցնորուած չեմ, ոչ էլ չափշտակուած վիպասաններով երևակայութեան պատուղներով: Եթէ ուզում ես ինձ լաւ ճանաչել, լսիր, ես վիպասիրուհի եմ:

„—Փիլիսոփա՞յ ես,—հարցրի ես զարմացած:

„—Փիլիսոփայ եմ, այո, մի փոքր փիլիսոփայ եմ,—պատասխանեց Լիզան: Ես ունիմ սեպհականի փիլիսոփայութիւն և դադուս եմ նորա վերայ հիմնուելով: Եթէ կամենաս, ես կարող եմ ասել, թէ ինչ է իմ փիլիսոփայութիւնը:

„—Կ'ցանկանայի իմանալ,—պատասխանեցի ես հետաքրքրուած մի և նոյն ժամանակ կասկածելով, թէ մի գուցէ Լիզայի ուղեղը խախտուել է:

„—Ահա նա կարճառօտ կերպով:—Մարդը 'ի քնէ ծնուած է կամ ստրուկ լինելու կամ ստրկացնելու ձգտումներով: Երբ երկու արարածներ, դիցուք թէ այր և կին, միանում են բազդաւոր ապրելու համար, նոցանից մէկը պիտի լինի ստրուկ, միւսը՝ նորա տէրը: Ուրիշ կերպ անհնարին է, որ նոքա բազդաւոր լինեն: Նոցա միաւորացնող կապը չի կարող առանց դորան ամուր լինել:

„—Այսինքն այնպէս, ինչպէս ասիական ընտանիքներում, ուր մարդը կնոջ տէրն է,—հարցրի ես աւելի ու աւելի զարմանալով:

„—Անշնչին,—պատասխանեց Լիզան,—ամենևին: Այնտեղ տիրում է բռնակալութիւն և ոչ թէ ստրկութիւն: Այնտեղ կինը հպատակվում է մարդու արտաքին երեսներին: Ես խօսում եմ այն բարոյական և հոգեկան առանձնայատկութիւնների մասին, որոնք մի արարածին անգիտակցաբար հպատակեցնում են միւսի առջև: Լաւ լսիր, անգիտակցաբար եմ ասում և ոչ թէ գիտակցաբար:

Այդ խօսքերից չեղոց Լիզան լռեց:

„—Բայց ինչո՞ւ պիտի միայն տղամարդը ունենայ իւր մէջ այդ քո ասած հոգեկան զօրութիւնը,—հարցրի ես:

„—Երկուսից մէկը, կամ կինը կամ տղամարդը: Բայց իմ կարծիքով լաւ է, որ տղամարդը ունենայ այդ ոյժը: Ես զգում եմ, որ կնոջ համար աւելի հեշտ է և քաղցր հպատակուել քան թէ հպատակեցնել: Հենց այդ հպատակութիւնն է, որին մարդիկ սխալմամբ անուանում են կնոջ սէր: Ես այդպէս եմ հասկանում:

„—Դա սխալ գաղափար է Լիզա,—ընդհատեցի ես:

„—Սխալ է թէ ուղիղ, բայց դա իմ համոզմունքն է:

„—Եւ դու երբէք չե՞ս փոխելու:

„—Երբէ՛ք:

„—Ուրեմն իմ մէջ չ'կայ այդ զօրութիւնը:

„—Գուցէ կայ էլ, բայց ես չեմ զգում: Եթէ զգայի, այդ խօսակցութիւնը մեր մէջ չէր լինի և ես ի'հեռանայի քեզ անգիտակցաբար, ուր որ դու գնայիր:

„—Բաս ո՞ւմն մէջ ես զգում,—հարցրի ես:

„—Բուսական է, չափից մի անցնիլ,—պատասխանեց Լիզան խոտութեամբ:

„—Ուրեմն քո սէրը դէպի ինձ . . .

—Ես պատասխանեցի այդ հարցին և մեր մեջ ամեն ինչ վերջացած է,—ընդհատեց խոսքս Լիզան և ձեռով մի վճռական շարժում անելով, բարձրացավ տեղից:

Ես ուշադրի սկսա մի րոպե ապշած նայելի նորա երեսին, չեմոց կարծեցի մեջ գգացի մի ձնշում: Կարծես թե մեկը խեղդում էր ինձ:

Ընդհատեն նայեցի և ասացի.

—Դու արտասովոմ ես, դա պատիժ չի թերում տղամարդին: Յեվաւնս որ Գերոդ ես արտասովոմ եմ և շատ պատճառ կի արտասովոմ: Բայց Լիզայի չանդիմանութիւնը մի րոպե իմ մեջ վառեց ապնական ինքնասիրութիւնս և ես դժկամ վերցնելով, ասացի.

—Մնաս բարով:

—Գնան բարով, կարող ես այցելել եթե ուզում ես,—պատասխանեց Լիզան ձեռը մեկնելով:

—Յաւիտեան,—ասացի ես և դուրս եկայ:

Աչտեղ Արզաս Պետրովիչը չանկարծ լռեց և գրպանից թաշկինակը հանելով, սրբեց ճակատը, ուր քրտինքի կաթիլ անգամ չկար: Նա այնպիսի արագութեամբ և ամուր էր քաշում թաշկինակը, որ կարծես թե, այդպիսով ուզում էր հեռացնել երանից անցեալի վշտալի յիշատակները: Գերոդը, որ մինչև այդ ժամանակ չէր ուշադրել մանրամասնութեանց բարեկամի երեսին, երբեմն ուշադրութիւնը չուում էր նորա պատմութիւնը,—անհամբերութեամբ հարցրեց.

—Յետոյ:

—Յետոյ, էլ ինչ չեմոց,—պատասխանեց Արզաս Պետրովիչը լաթը հառաչելով: Յետոյ, Գերոդ ընկայ այն դրութեան մեջ, որից դուրս գալու համար միայն երկու ելք կար—կամ ինքնասպանութիւն կամ մոռացութիւն: Բարեբաղդաբար վճռեցի պնտել երկրորդ միջոցին: Հանգամանքները ներեցին կատարելագործելի փոխադրուեցի, ուրիշ քաղաք: Այստեղ ինձ յաջողուեց մի տարուայ ընթացքում դուրս բերել սրտից Լիզային: Լիզայի հետ իմ մեջ մեղան և սիրոյ զգացմունքը և հաւատը դեպի կին ամուսնացութիւն: Իսկ թէ որքան ծանր և տաժանելի էր ինձ համար այդ մի տարին, ես չեմ պատմիլ Գերոդ, որովհետև առանց դորան էլ պատմութիւնս լսելու երկարացաւ:

Այդ առեւով Արզաս Պետրովիչը չանկարծ բարձրացաւ տեղից, ժամացույցին նայեց և ասաց.

—Բաւ դադրեմ:

—Սպասիր,—պահեց նորան Գերոդը—դու դեռ չես ազատել քո պատմութիւնը, ուր ես շտապում:

—Ներողութեան,—ասաց Արզաս Պետրովիչը, դէմքը հակընդդէմ:

—Բաւ Լիզային:

—Մի՞թէ դա հետաքրքրելի է:

—Գոնէ ինձ համար նորան հետաքրքրելի է,

—Յիշում ես այն երեկոն, երբ Մուշտայիդում զբօսնում էինք:

—Յիշում եմ,—պատասխանեց Գերոդը, նայնպէս բարձրաձայն տեղից:

—Յիշում ես, երբ մենք նստած լինէինք համում, մեր առջեւ անցաւ մի առողջ զույգ, որին ես բարևեցի:

—Այն գեղեցիկ կինը և այն բարձրահասակ տղամարդը,—հարցրեց Գերոդը հետաքրքրութեամբ:

—Հա, գեղեցիկ կինը Լիզան էր, իսկ բարձրահասակ տղամարդը՝ ուսուցիչ Սեթեանը:

—Ուրեմն...

—Պառկել են վազուց:

—Բայց լրիւ պատմիր:

—Դա չը գիտեմ, միայն համոզուած եմ, որ Սեթեանը այժմ էլ լռում է և Լիզայի տառը հարցերին մի պատասխան չի տալիս: Տառը հարցերին մի պատասխան չի տալիս և նա գնում ու ուրտը չի պարզում նորան, ինչպէս ես ուրի իմ ցնծարութեամբ:

—Տառին մեկ պատասխան չի տալիս,—կրկնեց Գերոդը:

—Տառին մեկ:

—Ուրիշ ոչինչ:

—Ուրիշ ոչինչ:

—Բարի գիշեր, տառներկու ժամն է:

—Սպասիր, քառ Եւգենիան, լսպտուծը, Մարտին Բուզդանիչը,—հարցրեց երարու եռանդ Գերոդը:

—Ոչ, դա հետաքրքրելի չէ: Բարի գիշեր, քունս առնում է:

Արզաս Պետրովիչը հեռացաւ: Գերոդը մնաց միայնակ:

—Ողորմելի մարդ,—ասաց նա—միայն մի փորձով կնոջ վերայ այդպիսի գաղափար կազմել:

Այնուհետև նա մի քանի վայրկեան ընկաւ մտածողութեան մեջ և ձեռը ճակատին խփելով ասելացրեց.

—Բայց ապրիլ մտածել Լիզայի փիլիսոփայութեան մասին:

Եր վեցերորդ:

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Աբեղեան աշխարհահռչակ երգչուհի Յուլիա Վարդանեանց—գեղարուեստից աշխարհահռչակ Հոյակապ պալատը, որի շինութիւնը վեց տարուց ճարտարապետ Հանդէնի ծրագրով սկսել էր քիչ ժամանակ առաջ Ռումելիայում վախճանած հարուստ յոյն Հայրենասէր Եվանգելիս Յապպը, արդարեւս քոլորովին պատրաստ է: Յապպի մահուանից յետոյ այդ հոյակապ շինութեան վերջնական յանձնաժողովը յոյս ունի շինութեան ներքին մասը աւարտել առաջիկայ տարին: Աշխարհահռչակ երգչուհի տեղի կունենայ 1887 թուին, դա յոբելեան ազգային գեղարուեստական հանդէսը կը լինի Աթենքում. Յապը այդ ճեռնարկելու նպատակ ունէր ծանօթացնել Եւրոպային այն ազգ յառաջադիմութեան, որին հասել են նորա հայրենակիցները արուեստից վերաբերութեամբ վերջին 12 տարուայ ընթացքում, այն է 1875 ից մինչև 1887 թիւը:

Պարսից շահի առնչեալ աշխարհագրական օժանդակներից մէկը: Զանազան թանկագին գանձերի թուում, որոնց հիշում է. Պարսկաստանի ինքնակալը, գտանվում է մի շատ հազուադեպ երկրագունդ: Երկրագունդը տասնով մի անգլուացու պատմածին նայելով, նա 18 մատուածի տրամագիծ ունի և նորա վերայ քոլոր ծովերը յերկրագծած են պայծառ կանաչ գոյներով: Հիւսիսային Ամերիկայի ամբողջ Մեացեալ Նահանգները ձեւացրած են ագռաւանման, Հնդկաստանը՝ աղաւաղուած, Աւստրօ—Հունգարիան՝ շատիկ զոյով, Ֆրանսիան գարձեալ ուղղանկիւնեով: Այս տարօրինակ երկրագնդի արժէքը գնահատուում է մի միլիոն թագաւորութեան նիւթական արժողութեան:

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՒ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ
ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

31-ն Յուլիսի 1885 թ.

ՊԱՀԱՆՋԻ

1. Անդամք 1169	5,692,175 —	
Անդամակցութեան վճարները հանելով	1,026,150 —	4,666,025 —
2. Դրամարկղ (առ ձեռն Թղթադրամ)		38,174 03
3. Ընթացիկ հաշիւ Պետական բանկային բաժնում		137,420 01
4. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ		2,768,430 11
5. Զեղջումն տոկոսաբերք թղթերի, կտրօններու և այլն		17.805 89
6. Զեղջ. ապահ. մուրհ. (՛ի հրամանի ընկերք.) միակ ստորագ.՝		
ա. Ապրանքներով	17,672 —	
բ. Անշարժ կալուածներով	326,925 —	344.597 —
7. Փոխառութիւն գրաւականով՝		
ա. Պետութիւնից ապահ. տոկոսաբերք թղթ.	267,571 —	
բ. Պետութիւնից ոչ ապահովեալ տոկոսաբերք թղթերով	214,650 —	
գ. Թանկագին մետաղներով և ոսկիով	560 —	482,781 —
8. Մասնաւոր ընթացիկ հաշիւներ		591,462 33
9. Պահեստի դրամագլխին պատկանեալ տոկոսաբերք թղթեր.		29,136 85
10. Թղթակիցներ՝		
ա. Նոցա հաշիւ (Loro)	370,461 33	
բ. Ընկերութեան հաշիւ (Nostro)	1,222,764 40	1,593,225 73
11. Բողոքուած մուրհակներ	4,162 88	
Բողոքուած մուրհակներ միակ ստորագրութեամբ, ապահ. անշարժ կալուածներով	11,000 —	15,162 88
12. Դրոշմանիշք և դրոշմաւոր թուղթք		2,517 62
13. Ընթացիկ ծախսեր		21,688 60
14. Ցետ ստացուելիք ծախսեր		7,001 94
15. Կահ կարասիք և սկզբնական ծախսեր		4,758 87
16. Փոխանցիկ գումարներ		46,860 75
		10,767,048 61

ՊԱՐՏՔ

1. Ապահովութեան դրամագլուխ		4,666,025 —
2. Երջանկելի դրամագ., անդամակցական վճարն. պոյացած		1,026,150 —
3: Պահեստի դրամ. կանոն. 66 յօդ. համաձ. (հիմնվ. 1883 թ.)		32,379 08
4. Դրամագլուխ ՛ի նպաստ պաշտօնէից կանոնադրութեան 66 յօդ. համաձայն (հիմնուած 1883 թ.)		2,782 95
5. Դրամական աւանդներ՝		
1) ա. Հասարակ ընթացիկ հաշուով	453,902 33	
բ. պայմանաւոր ընթացիկ հաշուով	277,504 49	
2) պայմանաժամով՝		
ա. ընկերութեան անդամներից	436,915 94	
բ. այլ անձինքներից	952,827 52	
3) ցպահանջ՝		
ա. ընկերութեան անդամներից	430,323 —	
բ. այլ անձինքներից	238,557 92	2,790,031 20
6. Փոխառութիւն Թիֆլիսի պետական բանկայնբաժնից ղեղջեալ մուրհակներով		304,511 22
7. Ընկերութեան ինջնորդութեամբ վոխադրուած և վոխադրելի գումարներ		69,826 60
8. Թղթակիցներ՝		
ա. Նոցա հաշիւ (Loro)	225,577 06	
բ. Ընկերութեան հաշիւ (Nostro)	1,336,373 82	1.561,950 88
9. Վճարելի շահաբաժինք		30,999 44
10, Ջ'վճարուած տոկոսներ դրամական աւանդներու և ընթացիկ հաշիւներու		76,122 09
11. Փոխանցիկ գումարներ		12,112 32
12. Ղեղջեալ մուրհ. վերապահ. գումար կանոն. 16 յօդ. համաձայն		22,715 87
13. Ստացուած տոկոսներ և յանձնաբարականներ		171,441 96
		10,767,048 61

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ՎԱՐԱՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր։ Ս. Առաւօտեան՝ 9—11 ժ. Բուդկովսկի—մանկական և ներքին հ. Նաւասարդեան—վիրաբուժական (նաև ատամնացաւի) և վեներական հ. $10^1/_2$—$11^1/_2$ ժ.—Կին—բժիշկ Շէյբինինո, մանկաբարձութեան, կանանց և վեներական հ. 11—12 ժ. Կին-բժիշկ Շմոյ—աչքացաւի, կանանց և ներքին հ. $11^1/_2$—1 ժ. Նաւասեանց—աչքացաւի։ Երեկոյեան՝ 6—7 ժ. Նաւասարդեան—ամեն օր, Շչերբինինա, Բուդկովսկի, Շմիտց և Նաւասենկո—երեքշաբթի և շաբաթ։

Համախորհրդ—ը (կօնսիլիում—հիւանդանոցի բոլոր բժիշկների) երեքշաբթի և շաբաթ երեկ. 7—8 ժ.։

Հիւանդանոցը ունի սենեակներ գիշերօթիկ հիւանդների համար ամսական 40 և 80 ր. վճարով։

Երթևեկ հիւանդները վճարում են 50 կ. համախորհրդի համար 3 ր. ։Զքաւորները՝ անվճար։

Հիւանդանոցի վերատեսուչ Նաւասարդեան։

7—14

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԿԱՏԻԿ

պատմական վէպ

ԹՈՐԳ. ԳԻՒՏ ՀՈՎՍ. ՍԱԼԱՆԵԱՆՑ.

Վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում և Թարգմանողի մօտ Ներսիսեան դպրոցում։

Գինն է **50** կոպ.

ԲԱՇԿԱՊԵՏ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԸ տեղափոխուել է Ստարօ Ինսիտուտի փողոցը Բայսողոլովի տունը համար 19.

2—2

Дозв. Ценз. Тифлисъ, 12 Іюля 1885 г.
Типографія И. Мартиросіанца.